


ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

1.96



ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ



*Հայաստանի Հանրապետության նախագահ,
ԶՈՒ-ի գլխավոր հրամանատար **Ասոն Տեր-Պետրոսյանի** ելույթը
Հարվարդի համալսարանի Ջ. Բենեդիկտի անվան
պետական կառավարման դպրոցում (Քեմբրիջ, ԱՄՆ)*



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից
տարին շորս անգամ

1.1996

Մասնադասական օգտագործման համար • №

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԿՈԼԵԳԻԱ**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Շիրխանյան Վ. Գ.
(նախագահ)
Քոթանջյան Հ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Արրահամյան Մ. Ա.
Ավետիսյան Մ. Վ.
Գորդիենկո Ի. Վ.
Խորխորունի Վ. Վ.

<i>Ռ. Հ. Գասպարյան, Հայկական լեզվոնը (1916—1920 թթ.)</i>	<i>. 3</i>
<i>Ռ. Օ. Սահակյան, Վան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը 1915 թվականին</i>	<i>. 15</i>

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայրապետյան Վ. Ա.
Հարոյան Հ. Վ.
Հարությունյան Ա. Թ.
Հարությունյան Գ. Բ.
Հարությունյան Մ. Հ.

<i>Հ. Ս. Քոթանջյան, Մոզահեղի բարոյահոգեբանական արժեքային կողմնորոշումների հարցի շուրջ.</i>	<i>. 36</i>
--	-------------

ՍԳԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարտիրոսով Լ. Ա.
Օահսովարյան Ս. Ն.
Պետրոսյան Ա. Ա.
Պետրոսյան Ա. Ս.
Պետրոսյան Գ. Լ.

<i>Ռ. Ա. Ղազարյան, Ջենքի ոչ ավանդական տեսակների հեռանկարային մշակումների համառոտ ակնարկ</i>	<i>. 64</i>
---	-------------

ՄԱՐՏԱԿԱՆ ԳԱՏՐԱՍՏՈՒՄ

Սարգսյան Ա. Գ.
Սարգսյան Ա. Ե.
Սարգսյան Մ. Ս.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տեր-Թադևոսով Ա. Ի.

<i>Շ. Ա. Թափալցյան, Չմեռային պայմաններում տեխնիկայի շահագործման առանձնահատկությունները</i>	<i>. 75</i>
--	-------------

ՀՕԳ-Ի ՋՈՐՔԵՐՈՒՄ

<i>Ռ. Վ. Մարգարյան, ՀՕԳ-ի պորքերի տեսողական դիտարկման պահակակետերում մարտական հերթապահության կազմակերպումը</i>	<i>. 84</i>
--	-------------

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԳԱՆՈՒԹՅՈՒՆ

<i>Վ. Խ. Բաղդասարյան, Համարի բառարան</i>	<i>. 96</i>
--	-------------

«ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» («Армянская армия»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
N 1, 1996
Издается 4 раза в год

Редакционная коллегия:

В. Г. Ширханян (председатель); *Г. С. Котанджян* (гл. редактор);
М. А. Абрамян; М. В. Аветисян; В. А. Айрапетян; Л. В. Ароян; А. Т. Арутюнян;
Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; И. В. Гордиенко; Л. А. Мартиросов; А. А. Петросян;
А. С. Петросян; Г. Л. Петросян; А. Г. Саркисян; А. Е. Саркисян; М. С. Саркисян;
Н. Г. Тер-Григорьян; А. И. Тер-Татевосов; В. В. Хорхоруни; С. Н. Шахсуварян.

Научное консультирование и редактирование

генерал-майор *М. А. Абрамян*; подполковник, д. мед. н., профессор *Б. Н. Арутюнян*;
к. филос. н., доцент *В. Х. Багдасарян*; подполковник, д. ист. н., профессор *Б. П. Балаян*;
полковник, д. полит. наук, профессор *Г. С. Котанджян*;
генерал-майор *С. С. Мартиросян*; д. ист. н., проф. *Р. Г. Саакян*,
майор, д. тех. н. *А. Е. Саркисян*; генерал-лейтенант *И. Г. Тер-Григорьянц*.

«ՆԱԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» («Armenian Army»)
MILITARY-SCIENTIFIC JOURNAL
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 1, 1996
Is published 4 times a year

Editorial board:

V. G. Shirkhanian (Chairman), *H. S. Kotanjian* (Editor-in-chief),
M. A. Abrahamian, M. V. Avetisian, I. V. Gordienko, V. A. Hairapetian, H. V. Haroian,
A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian, V. V. Khorkhoruny,
L. A. Martirosov, A. A. Petrosian, A. S. Petrosian, G. L. Petrosian, A. E. Sarkisian,
A. G. Sarkisian, M. S. Sarkisian, S. N. Shahsouvarian, N. G. Ter-Grigoriants, A. I. Ter-Tatevosov.

Scientific Consultating and Editing:

M. A. Abrahamian, Major-General; *V. Kh. Baghdasarian*, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
B. P. Balanian, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.;
B. N. Haroutunian, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Medicine; *H. S. Kotanjian*, Colonel, Prof., Dr. of Polit. Sc.;
S. S. Martirosov, Major-General; *R. G. Sahakian*, Prof., Dr. of Hist. Sc.;
A. E. Sarkisian, Major, Dr. of Tech. Sc.; *N. G. Ter-Grigoriants*, Lieutenant-General.
Consultation in English Military Terminology: *A. Armenian*, ph. D., and *C. Tunc*.

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ (1916 — 1920 ԹԹ.)

Ռ. Հ. ԳԱՄՊԱՐՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու

Առաջին համաշխարհային պատերազմը սերունդների հիշողության մեջ մնաց և կմնա որպես մի աննախադեպ իրողություն ոչ միայն իր արհավիրքներով ու կործանարար հետևանքներով, այլև ընթացիկ դարում առաջին անգամ իրականացված այնպիսի մի ահավոր և ներում բացառող հանցագործությամբ, ինչպիսին է ցեղասպանությունը, տվյալ դեպքում՝ հայերի ցեղասպանությունը, մի հանցագործություն, որը հրևարավոր դարձավ մեծ տերությունների թողտվության քաղաքականության պայմաններում: Հետամուտ լինելով համաթուրանական պետության ըստեղծմանը, ցանկանալով հայ գործունյա տարրի ձեռքից խլել ձեռներկություն և եռանդի շնորհիվ տասնամյակների ընթացքում նրա ստեղծած դրամական կուտակումներն ու կուրթական արժեքները, տնտեսական հպորությունն ու առաջադիմությունը, ձգտելով փակելու քրիստոնյաների, մասնավորապես հայերի վիճակը բարելավելու պատրվակով Թուրքիայի ներքին գործերին մեծ տերությունների միջամտության ճանապարհը՝ օսմանյան կառավարությունը՝ ըստ էության երիտթուրքական կուսակցությունը, որոշեց հայ ժողովրդի բռնաջնջմամբ «լուծել» հայկական հարցը և վերացնել իր նպատակների իրականացման ճանապարհին ծառայած խոչընդոտը՝ օգտագործելով առաջին աշխարհամարտի ընձեռած պատեհությունը:

Եվ այդ մեծագույն աղետի տարիներին մեկ անգամ ևս դրսևորվեցին մեր ժողովրդի անկոտրում կամքը, անխուճ մարտական ոգին, ապրելու, գոյատևելու տենչը, ինչն իր մարմնավորումը գտավ հայրենի պատմության հերոսական ու անմոռաց դրվագներում՝ ինքնապաշտ-

պանական մարտերում և կամավորական շարժման մեջ: Հայության տարբեր հատվածներ ինքնաբուխ պոթելումով, անսաշով հայրենակիցների անլուր տառապանքի, գազանային եղեռնի վրեժի կանչին և հեղված արյունը իրավամբ բավարար հիմք համարելով, գնալը ձեռքներին պայքարի նետվեցին անարգ ցեղասպանների դեմ: Տասնյակ հազարավոր հայեր էին կոչվում ռուսական, անգլիական և ֆրանսիական բանակների կազմում: Արդեն 1914 թ. հայ ազգային կուսակցությունների նախաձեռնությամբ, որը խրախուսվում և ղեկավարվում էր ռուսական իշխանությունների կողմից, սկսեցին կազմավորվել, հիմնականում արևմտահայերից և սփյուռքահայերից, կամավորական ջոկատներ, որոնք կոչվում էին ռուսական բանակում և ռազմի դաշտում շիապաղեցին ապացույցել իրենց մարտունակությունը:

Հայ կամավորական շարժման պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Արևելյան, կամ Հայկական, լեգեոնը, որի անցած ուղին լի է փառավոր հաղթանակներով, հաջող և վարպետորեն իրականացված ռազմական գործողություններով, միաժամանակ՝ ողբերգական իրադարձություններով: Լեգեոնը, որի ձևաչափը մեծամասնությունը հայեր էին, սկզբնապես կոչվել է Արևելյան, հետագայում վերանվանվել է Հայկական:

Հայկական լեգեոնի պատմությունն ունի իր նախապատմությունը:

1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում կնքվեց այսպես կոչված Մայքս — Պիկոյի (անգլոֆրանսիական) հանրահայտ պայմանագիրը, որով սկիզբ դրվեց թուրքական պետության մասնատմանը: Ըստ այդ պայմանագրի Կիլիկիան և հարավային Հայաստանը գերիշխանության

իրավունքով անցնում էին Ֆրանսիային, իսկ անգլիական իշխանությունը հաստատվում էր Միջագետքում՝ Պաղեստինում և Անդրհորդանանում¹:

Այս խնդրի իրականացման համար դաշնակիցները սիրիա-պաղեստինյան ռազմաճակատում կռվող ուժի մեծ կարիք էին պահում, ուստի, այդ պակասը լրացանելու համար, ձեռնամուխ եղան հայ և այլազգի կամավորների հավաքագրմանը: Մասնավորապես Ֆրանսիայի կառավարող շրջաններում արդեն ձևավորվել էր հայերից առանձին զորամիավորման կազմավորման մտայնությունը:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը համաձայնություն ձեռք բերվեց Սարկ Սայքսի, Ժորժ Պիկոյի և հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փառայի միջև: Պողոս Նուբարին պաշտոնապես հայտարարվեց, որ Կիլիկիան և հարավային Հայաստանը կանցնեն Ֆրանսիայի գերիշխանության տակ: Միաժամանակ քննարկվեց Արևելյան լեզգոնի ստեղծման նախագիծը: Լեզգոնի կազմում ընդգրկվելու էին հայ և արաբ (սիրիայի) մարտիկներ: Ընդրսմին գործն այնպես էր ներկայացվում, որ մարտական գործողություններին իրենց մասնակցությամբ հայերը հետագայում Կիլիկիայում անկախություն կամ ինքնավարություն ձեռք բերելու երաշխիքներ կստանան: Իսկ պատերազմի ավարտից հետո զորամասը պետք է դառնար Կիլիկիայում հայկական բանակի միջուկը²: «Ի պատասխան այս հարցումին Պողոս փառայ կը հայտարարեր որ միշտ պատրաստ են կամավորներ տալու, պայմանով որ անոնց թափած արյունը ապահովվե ազատագրությունը իրենց հայրենիքին: Ան կ'ավելցնեն թե կարևոր թվով կամավորներ տրամադրելիք պիտի ըլլան այն ատեն միայն, երբ իրենց տրվի այն երաշխավորությունը թե պի-

տի կռվին իրենց դարավոր թշնամիին դեմ իրենց մայր հողին ազատագրության համար»³: Ապա Պողոս Նուբարը Կիլիկիայի ինքնավարության երաշխիքներ է պահանջում՝ դա հիմնավորելով նրանով, որ այդ դեպքում Ֆրանսիայի դրոշի ներքո անհամեմատ շատ կամավորներ կհավաքագրվեն: Ժ. Պիկոն, իհարկե, անվարան խոստումներ է տալիս: Որպես արդյունք կնքվում է մի համաձայնագիր, ըստ որի հայ կամավորները կմարտնչեն միայն Թուրքիայի դեմ՝ մայր հողի ազատագրման համար, իսկ Ֆրանսիան կապահովի Կիլիկիայի ինքնավարությունը⁴:

Այս իրադարձությունը ժամանակի մի շարք անհեռատես քաղաքական գործիչներ ընկալեցին որպես Ֆրանսիայի հովանավորությամբ Կիլիկիայի ազատագրության և անկախության սկիզբ՝ չնկատելով կամ չնկատելու տալով մեծ տերությունների քաղաքականության երկդիմությունը: Հայության շրջաններում թևածում էին Սիրիայի և Հայաստանի կոմիսար նշանակված Ժ. Պիկոյի խոսքերը. «Դաշնակիցների հաղթանակից հետո Ֆրանսիան Կիլիկիային կտա ինքնավարություն իր հովանավորության ներքո»⁵: Այս խոսքը, ինչպես հետո պարզվեց՝ սին ու կեղծ, մեծ ոգևորություն առաջացրեց շարդերից մազապուրծ հայերի շրջանում: Թվում էր, թե երկրներում պայծառ շողայ հայոց արևը, թե մոտ է դարավոր ստորացումների, բռնությունների, կոտորածների հատուցման ժամը, թվում էր՝ հայը վերստին կշենացնի իր հայրենիքը՝ ամոքելով, դարմանելով արյունածոր վերքերը, թվում էր...

Հայերը բուռն խանդավառություն էին ապրում մոտալուռ ինքնավարության ձեռքբերման ակնկալությամբ: Հարյուրավոր երիտասարդներ շտապում էին փնտրագրվելու ֆրանսիական դը-

¹ Տես «Հուշամատյան մեծ եղեռնի»: Բեյրութ, 1965, էջ 832:

² Տես Ռ. Գ. *Ասիական*, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1918-1921 թթ.: Ե., 1970, էջ 113:

³ Տ. Հ. *Պոլսյան*, Հայկական լեզգոնը: Ուոթթաուն, 1965, էջ 7:

⁴ Տես նույն տեղում, էջ 8:

⁵ *Shu Du Viou Paul. La Passion de Cilicie. 1919-1921. Paris, 1954, p. 59.*

րոշի ներքո՝ հուսարով, որ պատերազմին իրենց մասնակցությունը կմոտեցնի բաղձալի պահը:

Հենց 1916 թ. հոկտեմբերի 27-ին Պողոս Նուբարը Կահիրե, իր որդի Առաքել բեյ Նուբարին հղում է մի հեռագիր՝ հանձնարարելով լայն թափ հաղորդել կամավորական շարժմանը. «Կը հաստատեմ կամավորներու հարցին առնչությամբ հոկտեմբեր 6 թվակիր նամակս, որմն հետո ստացած եմ պաշտոնական երաշխավորություն՝ թե Դաշնակիցներու հաղթանակեն հետո մեր ազգային բաղձանքները գոհացում պիտի գտնեն, պարտականություն կը դնեմ վրադ ձեռք առնելու միջոցներ, քաջալերելու և դյուրացնելու համար արձանագրությունը առավելագույն թվով կամավորներու»⁶:

Սակայն թող չստեղծվի այն կարծիքը, թե հայկական գաղթավայրերում կամավորական շարժումը սկսվեցավորվեց 1916 թ.: Հայ ազգային կուսակցությունների համատեղ ջանքերով այն ծավալվել էր դեռևս 1914 թ., իսկ 1916 թ. ավելի կազմակերպված ձև ընդունեց: Այսպես, դեռևս 1914 թ. նոյեմբերի 12-ին ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում Ս. Գ. Հնչակյան և Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցությունների ներկայացուցիչները, մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնություններն ու հակամարտությունը, որպես համատեղ խորհրդակցության արդյունք որոշեցին ԱՄՆ-ի հայոց Ազգային մարմնի միջոցով անմիջապես օգնություն կազմակերպել արդեն իսկ հայրենիքում պատերազմող հայկական կամավորական ջոկատներին և, եթե իրենց նախաձեռնությունը հավանության արժանանա դաշնակից տերությունների կողմից, ԱՄՆ-ում և այլուր հայկական գաղթավայրերում առաջ բերել զինյալ շարժում: Նույն նպատակով 1915—1916 թթ. եգիպտահայ գաղութում միասնական ջանքերով գործում էին հնչակյան Ս. Սապահ-Գուլյանը և ռամկավար Ապահ Պետրոսյանը, որոնք այդ խնդրի շուրջ բանակցություններ էին

վարում Պորտ-Սաիդում կառանած ֆրանսիական նավատորմի ծովակալի հետ: Նրանք կազմեցին մի ջոկատ, որի մարզումն իրականացնում էին ֆրանսիական նավատորմի սպաները, բայց, շատ չանցած, ինչ-ինչ պատճառներով ջոկատը ցրվեց⁷: Եգիպտոսի անգլիական իշխանությունները փորձում են սվեդիաիայերին որպես բանվորների տեղափոխել Սելանիկ, սակայն վերջիններս չեն ենթարկվում, քանի որ «սվեդիացիին ոչ միայն չէր ուզեր որպես գործավոր երթալ, այլև անոր միակ կամքն էր կռիվ մղել թուրքերուն դեմ՝ որպես կամավոր, կռվող ուժ»⁸:

1916 թ. նոյեմբերի 26-ին ֆրանսիական կառավարությունը (հմ. 7/966-9/11 հրամանով) պաշտոնապես հայտարարեց Արևելյան լեգեոնի կազմավորման մասին ռազմական նախարարության նոյեմբերի 15-ի որոշումը: Լեգեոնի հրամանատարությունն իրականացնելու էին ֆրանսիացի սպաները: Այն հավաքվելու և ռազմական ուսուցումն անցնելու էր ըստ ազգային և կրոնական պատկանելության՝ հայերից և սիրիացի արաբներից: Սակայն, ի տարբերություն ֆրանսիացի զինվորի, զորացրվելուց կամ վիրավորվելուց հետո լեգեոնականը փոխհատուցում կամ դադարման ռոճիկ չէր ստանալու: Այլ զորամիավորումներում ծառայող հայերին և սիրիացիներին հատուկ որոշմամբ իրավունք էր վերապահվում անդամագրվելու Արևելյան լեգեոնին: Ֆրանսահայ կամավորներն անմիջապես հավաքագրվում և ուղարկվում էին Կիպրոս: Եգիպտոսում այդ գործի պատասխանատուն Պորտ-Սաիդի ֆրանսիական հյուպատոսությունն էր, իսկ այլ վայրերից կամավորագրված մարտիկները ֆրանսիական հյուպատոսներից ստացած վկայագրերով (անձը հաստատող փաստաթղթերով)

⁷ Տես «Կիլիկյան տարեցույց», Ա տարի, կազմեցին Նվարդ Ապպետ և Արամ Ապպետ (այսուհետև՝ «Կիլիկյան տարեցույց»): Կ. Պոլիս, 1922, էջ 28:

⁸ Նույն տեղում, էջ 29:

⁶ Տ. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 8-9:

Ժամանում էին Հալիբ կամ Մարսել, ապա ճանապարհվում Կիպրոս: Ասիայից ժամանած կամավորները Կիպրոս էին անցնում Պորտ-Սահիդի վրայով: Մինչև Կիպրոս ճանապարհածախսը հոգում էին կամավորներին հավաքագրող հանձնախմբերը: Ջորամասի կազմավորման և հանդերձավորման բոլոր ծախսերը հոգում էր ֆրանսիական կառավարությունը⁹:

Լեզեոնի առաջին մարտիկներից էին Մուսա լեռան ահեղ մարտերում ռազմական փորձ և իմացություն ձեռք բերած հայ կամավորները, որոնք, ինչպես նշել է իրադարձությունների մի ականատես ու մասնակից, «պատրաստի ատաղձ էին այդ տեսակ շարժման մը»¹⁰: Անասելի էին մուսալեռացիների անխարդախ ուրախությունը և ոգևորությունը, նրանց կարոտակեզ հոգիները ձգտում էին դեպի հայրական սուրբ օջախներ: Մոտ 600 սվեդիացիներ (այդ թվում՝ Մուսա լեռան 1915 թ. հերոսամարտի դեկավար Եսայի Յաղուբյանը) կարճ ժամանակում հաստատվում են Կիպրոսում տեղակայված ճամբարում՝ մտնելով լեզեոնի 1-ին հայկական գումարտակի մեջ: Ֆրանսիական ռազմական նավատորմի սպա Տիրան Թեքեյանի վկայությամբ նրանք իրենց ռազմական ուսուցումն սկսել էին շատ ավելի վաղ, դեռևս Պորտ-Սահիդում, ֆրանսիական ռազմաճակատի մեկի հրամանատար Բենուա դ'Ալֆի դեկավարությամբ և Կիպրոս մեկնեցին արդեն որպես պատրաստի ռազմիկներ: Շուտով նրանց են հետևում 300 եգիպտահայեր, թուրքական բանակի 236 հայ նախկին ռազմագերիներ: Ս. Դ. Հնչակյան կուսակցության կոչով մոտ 800 երիտասարդներ անդամագրվում են լեզեոնին:

1916 թ. նոյեմբերին Կահիրե է ժամանում վորամիավորման հրամանատար նշանակված գնդապետ Ռոմիոն, որը տեղում ուսումնասիրում է լեզեոնի կազմավորման հարցերը: Նա բավմիսս հանդիպում է Եգիպտոսի Հայ ազգային միության անդամների հետ: Մեկ ան-

գամ ևս, այժմ արդեն այս մակարդակով, համաձայնություն է ձեռք բերվում, որ լեզեոնը պետք է պատերազմի միայն Պաղեստինի ճակատում և Կիլիկիայում: Գնդապետ Ռոմիոն Առաքել բեյ Նուբարի և այլոց ներկայությամբ հրապարակում է Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Բրիանի նամակը. Ա. Բրիանը «հաստատում էր» Ժորժ Պիկոյի և Պողոս Նուբարի միջև կնքված



Գնդապետ Ռոմիոն,
Հայկական լեզեոնի հրամանատար

համաձայնությունը՝ Կիլիկիան հետագայում հայերին հանձնելու մասին:

Մեծ արագությամբ կազմվում է Արևելյան լեզեոնի 1-ին գումարտակը՝ բաղկացած սվեդիահայերից, եգիպտահայերից և թուրքական բանակի հայ ռազմագերիներից: Գումարտակը, նոյեմբերի վերջին տեղափոխվելով Կիպրոս, ճամբար է վարկում Մոնարկա կոչվող ծովեզրյա ամայի դաշտում: Այդ լուրը և արագորեն տարածվեց, ոգևորություն առաջացրեց հայության տարբեր շրջաններում: Ոսկեշող պատրանքներով համակված՝ հայերն անկեղծորեն հավատում էին դաշնակիցների խաբեկատիր խոստումներին: Ամենքն էլ ցանկանում էին Կիլիկիայի պատագրության և ինքնավարության գործին նպաստել եթե ոչ մարտական գործողություններին անձնական մասնակցությամբ, ապա գոնե բարոյական, ֆինանսական-նյութական օգնությամբ: Շատերը պենք վերցրին՝

⁹ Տես Տ. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 10-11:

¹⁰ Տես «Կիլիկյան տարեցույց», էջ 29:

անսարով արյան կանչին ու հոգու թելադրանքին: Ձենք վերցրին՝ լուծելու իրենց պրծված և անարգված, խաչված ու հոշոտված քույրերի, մորթված վավակների, բվկտված ժողովրդի, թալանված օջախների վրեժը: Բնութագրական է կամավոր Միսաք Հավուհյանի օրինակը. «Դարդանելեն մինչև Պաղեստինի կիպիչ անապատները ականատես եղեր է հայ տարագրվածներուն անտանելի, աներևակայելի չարչարանքներուն և սրտի փլուզումով մը խեղդեր է իր մեջ բռնկած վրեժի կրակը՝ առժամապես: ՈՒ այս ամբողջին հանդեպ՝ ուխտեր է իր ամենանվիրական բաներուն վրա, որ վրեժ պիտի լուծե օր մը չէ, օ՛ր մը: ՈՒ ահա, այդ առիթը կը ներկայանա և Միսաք չավուջ՝ սիրահոժար կը հագներ կամավորի հագուստը նվիրական ուխտը ի գլուխ հանելու համար՝ իր բազկի ուժը ուրիշներուն բազկի ուժին միացուցած»¹¹: Եվ իրոք, հենց այդ ձգտումն էր, հայրենի երկրում վերստին հաստատվելու, հող ու ջրին տիրանալու անմար ցանկությունն էր կորով ներարկում, ոտքի հանում կամավորներին, դա էր ուժ տալիս հավատարու հաղթանակին:

Կամավորական շարժումն առավել լայն տարածում է ստանում ամերիկահայերի շրջանում: Այստեղ ևս կազմակերպական աշխատանքները ստանձնում են հայ ազգային կուսակցությունները: Առանձնապես մեծ աշխատանք են ծավալում Ս. Սապահ-Գուլյանը և Մ. Տամատյանը, որոնք, Պողոս Նուբարի հանձնարարությամբ, 1917 թ. ամռանն ԱՄՆ էին անցել լեգեոնի համար կամավորներ հավաքագրելու նպատակով: Ամերիկահայ կամավորները Կիպրոս էին փոխադրվում ֆրանսիական նավերով: Նրանց առաջին խումբը (90 հոգի)՝ հիմնականում քնաապյիներ և տիգրանակերտցիներ, ճանապարհ ընկավ 1917 թ. հունիսի 9-ին: Կարճ ժամկետում կազմավորվում են հիմնականում ամերիկահայերից բաղկացած 2-րդ և 3-րդ գումարտակները: Ցավոք՝ ԱՄՆ-ում ցուցակագրված 5000 կամավորներից ինչ-ինչ պատճառներով

Կիպրոս են անցնում միայն 1200-ը: Շուտով լեգեոնի անձնակազմը հասնում է 3000 հոգու¹²:

Ժամանելով Մոնարկա՝ կամավորները բաժանվում էին գումարտակների, վաշտերի, տասնյակների, ստանում էին հանդերձանք, զենք և զինամթերք: Սակայն աննախանձելի էր նրանց վիճակը: Առաջին բանը, որ հարուցում էր կամավորների արդարացի դժգոհությունը, կրտսեր սպաների և ենթասպաների կոպիտ, արհամարհական վերաբերմունքն էր: Եվ հետո՝ ֆրանսիական հրամանատարությունը, սկզբնական շրջանում, հայ մարտիկներին օգտագործում էր շինարարական աշխատանքներում, իսկ վերջիններս զանգատվում էին՝ ասելով, որ իրենք եկել են բնավ ոչ շինարարության համար¹³:

Բայց որոշ ժամանակ անց սկսվում են մարզումները՝ նշանառություն, հրացանաձգություն, վազք, մարմնամարտություն, զորաշարժեր, շարային պատրաստություն և այլն, մի բան, որ ոգևորում էր հայերին: Նրանք ջանադրաբար մարզվում էին՝ անհամբեր սպասելով հակառակորդի հետ չափվելուն:

Շուտով մի այլ դժգոհություն է առաջանում կամավորների շրջանում: Դըրա պատճառն այն էր, որ մեծ թվով հայ մարտիկներ ռազմական գործողությունների տարբեր թատերաբեմներում արդեն մասնակցել էին մարտերի և ռազմական գործի իմացությամբ ու փորձով, կրթության մակարդակով արժանի էին գոնե ենթասպայի, եթե ոչ սպայի աստիճանի, բայց ֆրանսիական հրամանատարությունը դեռևս հայազգի կադրերին ուշադրություն չէր դարձնում: Նույնիսկ ԱՄՆ-ում զինվորական տարբեր աստիճաններ ունեցողներն այստեղ միայն ամիսներ անց էին արժանանում սերժանտի կամ փոխտեղակալի աստիճանի: Առաջիններից մեկը, որ սպայի աստիճան ստացավ, վաշտի հրամանատարի տեղակալ լաւ (Ջոն) Շիշմանյանն էր:

¹² Տես Մ. Ա. Թաթարյան, Կամավորի մը հուշերը: Անթիլիաս-Լիբանան, 1960, էջ 7: Տես նաև Տ. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 38:

¹³ Տես Տ. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 63-64:

¹¹ Կիլիկյան տարեցույց, էջ 38:

Ամիսները գլորվում էին՝ գորշ, միապաղաղ ու ձանձրալի, երբ հանկարծ հրաման եկավ նախապատրաստվելու արշավի: «Մոռոցած ենք մեր հին ցավերը, մոռոցած՝ մեր երեկվան բողոքներն ու

Ափ իջնելով Պորտ-Սահյուն՝ լեզեոնը մայիսի 18-ի երեկոյան երկաթուղով շարժվում է հարավ և բանակում Իսմայիլայի Էթ-Ռիի կիպիչ սարավանդում: Հուլիսի 12-ին լեզեոնը շարժվում է դե-



Հայ լեզեոնակացներ

հուսալքումը: Անոնց հաջորդած է անչափելի խանդավառություն և անջինջ վճռականություն հաղթելու կամ մեռնելու ավատագրական պայքարին մեջ», հիշում է կամավոր Տ. Պոյաճյանը¹⁴:

Առաջին գումարտակը Կիպրոսից ռազմաճակատ է մեկնում 1918 թ. ապրիլի վերջերին: Երկրորդ գումարտակը ծովը կտրում է մայիսի 9-ին, իսկ երրորդ գումարտակի մի մասը սպա Շենոյի հրամանատարությամբ ժամանակավորապես մնում է Կիպրոսում՝ հետագայում լեզեոնին օգնության գնալու հանձնարարականով, մյուս մասը ուղարկվել էր Կաստելորիս կղզի, մի վաշտ էլ՝ Միրիայի ափերից ոչ հեռու գտնվող Ռուստ կղզի: Ավելի ուշ այս ջոկատները փոխադրվեցին Բեյրութ, ապա՝ Կիլիկիա¹⁵:

պի Մեջդե, որտեղ նրան են միանում 250 արաբ վիսվորներ: Հարկ է նշել, որ միայն հայ կամավորները կազմում էին երեք գումարտակ՝ չհաշված գնդապետրորդների վաշտը և հրետանավորներին, ընդամենը՝ ավելի քան 4000 հոգի¹⁶:

Օգոստոսի 25-ին շարունակելով ռազմերթը (աննկատ մնալու համար առաջ էին շարժվում միայն գիշերները)՝ 30-ին լեզեոնը ճամբար է կարկում Ռաֆաթ կոչվող վայրում, ռազմաճակատից ընդամենը 4-5 մղոն հեռավորության վրա¹⁷: Պաղեստինյան ռազմաճակատը ձգվում էր Հայֆայից (Միջերկրական ծովից փոքր-ինչ հյուսիս) մինչև Հորդանան: Դաշնակից բանակների հրամանատարն էր անգլիացի գեներալ Էդմոնդ Հենրի Ալենբի: Նրա հրամանա-

¹⁴ Նույն տեղում, էջ 93:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 93-94:

¹⁶ Տես նույն տեղում, էջ 107:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 111:

տարության ներքո գտնվում էր 76.000 զինվորներ և 500 թնդանոթներ ունեցող մի մարտունակ բանակ՝ ընդդեմ թուրքական 50.000 զինվորների և 300 թնդանոթների: Հակառակորդ բանակի հրամանատարը գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսն էր: Ալենքիին է միանում դը Պիեպայի հրամանատարությամբ գործող ֆրանսիական զորամասը (7000 զինվոր) հրետանային երեք մարտկոցներով և Լը Բոնի հեծյալ շոկատով: Այդ սորամասի կազմում էր և Արևելյան լեգեոնը¹⁸:

Սեպտեմբերի 14-ի գիշերը լեգեոնը Ռաֆայից շարժվում է առաջավոր գիծ՝ կանգ առնելով անգլոֆրանսիական բանակի կենտրոնի առաջապահում, Արարայի առջև, «ուր Հայկական լեգեոնի փառքը պիտի կերտվեր այնքան փառահեղորեն, հաղթանակի դափնիներով պարգարված»¹⁹:

Յաֆա (Հայֆա) նավահանգստից հյուսիս, Սարոնի դաշտում դիրքեր գրաված գեներալ Է. Ալենքին մտադիր էր հուժկու հարվածով ջախջախել լեռներում ամրացած թշնամուն: Հարձակման առանկյքը, հիմնական հարվածող ուժը գնդապետ դը Պիեպայի շոկատն էր, որը խնդիր ուներ գրավելու ծովեզրը: Աջ կողմում, Արարայում (Երուսաղեմ և Նաբլուս քաղաքների միջև), մի բլրաշղթայի վրա դիրքավորվել էր Արևելյան լեգեոնը: Հաջող գորաշարժերի միջոցով Է. Ալենքին 15 մղոն ճակատով թշնամու 8000 մարտիկների և 130 թնդանոթների դիմաց կենտրոնացրել էր 35.000 հետեվակային և 400 թնդանոթ: Հակառակորդին առաջին հարվածը պետք է հասցնեիր Արևելյան լեգեոնը²⁰:

Սեպտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը, առավոտյան 4.30-ին, սկսվում է Արարայի ճակատամարտը, այն ճակատամարտը, որին երկար ամիսներ սպասում էին հայ մարտիկները, այն ճակատամարտը, որտեղ հոգեկան անլուր տա-

ռապանքը, հաղթանակի կամքը և վաղվա օրվա հույսն էր առաջ մղում կամավորներին և սխարանքի կոչում: Հրամանատարներ Բ. Ազանի, Ֆուրուտիեի և Ճ. Շիշմանյանի առաջնորդությամբ նախահարձակ է լինում երկրորդ գումարտակը: Հրետանային և մասամբ էլ ավիացիոն ուժերով թշնամու հաջորդած սրընթաց գրոհը թուրքերը Արարայի բարձունքից փորձում են կասեցնել գնդապետի կրակով: Սակայն, արհամարհելով մահը, առաջ մղվելով, հայ քաջորդիները աստիճանաբար մտնում են թըշնամու դիրքերին, նետվում ավինամարտի և գրավում Արարա լեռը²¹: «Անարի թշնամին, — հիշում է ճակատամարտի մասնակիցը, — դեմ ցցված վրիժառու սվիններեն ինքզինք պաշտպանելու անկարող՝ լքեյ իր պաշտպանության բոլոր լավագույն դիրքերը և բռնեց փախուստի ճամբան»²²:

Ամրանալով երկրորդ պաշտպանական բնագծում՝ թուրքերը փորձում են գնդապետի կրակով անհղ հակառակորդին պահել անվտանգ հենավորության վրա, սակայն «ի՞նչ դժոխքն իսկ ըլլար իր դեմ կովողը, հայ զինվորը անպայման պետք է հառաջանար... Հարկ էր խորանալ անոր վրա, ըմպել անոր սև արյունը իբր փոփայուցիչ՝ վրեժի այն անշեջ բույին, որ դարերով այրած ու լաված էր Հայուն սիրտը»²³:

Ժամը 11-ին մոտ հրետակոծությունը թուլանում է, ավարտվում է ճակատամարտի առաջին փուլը:

Կեսօրին ռազմի դաշտում տիրող կարծեցյալ խաղաղությունը խախտվում է թուրքական հրետանու կրակից: Ցանկանալով հետ գրավել կորցրած դիրքերը՝ թշնամին անցնում է հակահարձակման: Նրան ընդառաջ են նետվում հայ մարտիկները: Կատաղի ձեռնամարտ է սկսվում: Չդիմանալով հայերի անկասելի հարվածի զորությանը՝ թշնամին անկանոն նահանջի է դիմում՝ նո-

¹⁸ Shu Du Viou Paul. La Passion de Cilicie. 1919—1921, p. 59.

¹⁹ «Իլիկյան տարեկոչ», էջ 39:

²⁰ Shu S. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 114—115:

²¹ Shu U. Ա. Թաթարյան, Կամավորի մը հուշերը, էջ 14:

²² S. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 121:

²³ Նույն տեղում, էջ 122:

րանոր դիրքեր վիջելով կամավորներին: «Թուրքը, որ անպաշտպան ու անվեն հայերը մորթելու մեջ մեծ ճարպիկություն և քաջություն ցույց տված է, հայ կամավորին վենքին դեմ ընկրկեցավ և իր ամրակուռ դիրքերուն առաջին գիծը լքելով անցավ երկրորդ դիրքերուն», հիշում է կամավոր Մ. Թաթարյանը: «Թշնամին, — շարունակում է նա, — բարոյալքումի նըշաններ ցույց կու տար: Անգլիական օդանավն մը ցրված թռուցիկ մը անոնց կ'ազդարարեր, որ հայկական 60.000-ի հասնող քաջարի մարտիկներու բանակ մը իրենց դեմ պիտի գտնեին կռվի ճակատին վրա: Մեր թիվը այդ չափազանցված թիվն շատ ու շատ պակաս էր, բայց մեր ինքնավստահ կռվելու ձևը կարդարացնեն այդ համբանքը»²⁴:

Ժամը 17-ին լեգեոնականները ձեռնարկում են մեկ հարձակում ևս: Ավելի քան 1,5 ժամ տևած մարտն ավարտվում է թուրքերի լիակատար պարտությամբ: Գրավվում են թշնամու պաշտպանության 2-րդ և 3-րդ բնագծերը: «Մեպտեմբեր 19-ը, 1918, հանդիսացավ հայուն դյուցավնության այապույցը անգամ մըն ալ արձանագրող հրաշափառ օր մը: Հայ վիճվորը լիովին արդարացույցած էր իր վրա դրված հույսերը, կատաղիորեն հարձակելով թշնամիին վրա, արհամարհելով անոր գնդակներն ու ռումբերը և վայն անդարձ փախուստի մատնելով, մեկ օրվան մեջ, արևածագեն մինչև արևմուտք...», գրել է ճակատամարտի մի մասնակից²⁵:

Երեկոյան 2-րդ գումարտակին մարտական դիրքերում փոխարինում է 1-ին գումարտակը, պատրաստ՝ լույսը բացվելուն պես գրոհելու, սակայն արևի առաջին ճառագայթների հետ պարզվեց, որ թշնամին խուճապահար փախել է: «Պատահեցավ այն, — գրել է ժամանակակիցներից մեկը, — ինչ որ պիտի պատահեր: Թրքական «Երվդրըր» բանակը՝ Հայ կամավորին պողպատե հարվածին առջև

տեղի կուտար և այդ բանակի խայտաբղետ մնացորդները գլուխնին առած կը փախչեին հև ի հև, խառնիճաղանջ, դողահար»²⁶:

Ճակատամարտի օրը հայերը տալիս են 21 սպանված, 76 վիրավոր: Ստացած վերքերից երկու օր անց մահանում են ևս 2-ը: Քաջի մահով ընկան Գուրգեն



Լեգեոնական Միսաք Հավունճյան

Չիլճյանը, Հովհաննես Գույումջյանը, Միսաք Հավունճյանը և այլք²⁷:

Հաջորդ օրը թևերից հարձակման են անցնում ֆրանսիական (ալժիրյան) և անգլիական (հնդկական) զորամասերը: Որպես արդյունք՝ երեք կողմից օղակված գերմանաթուրքական զորախումբը վիջում է կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող դիրքերը և բռնում է նահանջի ուղին՝ սկիսք դնելով սիրիապաղեստինյան ռազմաճակատի քայքայմանը:

Արարայի ճակատամարտը կործանիչ ուժի վերջին հարվածն էր, որ արվեց

²⁴ Մ. Ա. Թաթարյան, Կամավորի մը հուշերը, էջ 15:

²⁵ Տես Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 161, ց. 1, գ. 60, թ. 11:

²⁶ «Կիլիկյան տարեցույց», էջ 39-40:

²⁷ Տես Տ. Հ. Պոլաճյան, նշ. աշխ., էջ 124:

Օսմանյան կայսրությանը: Սեպտեմբերի 25-ին ջախջախվեցին Պաղեստինի ռազմաճակատը պաշտպանող թուրքական 7-րդ և 8-րդ բանակները, սեպտեմբերի 30-ին՝ 4-րդ բանակը: Սրընթաց առաջանալով՝ դաշնակից զորամիավորումները հոկտեմբերի 1-ին գրավեցին Դամասկոսը, 6-ին՝ Բեյրութը (այստեղ Արևելյան լեգեոնին է միանում Մոնարկայում մնացած վաշտը), 26-ին՝ Հաղեպը: Այդ բոլոր ռազմական գործողություններում, անկյներով ավելի քան 250 կմ, հայ լեգեոնականները գտնվում էին առաջավոր դիրքերում՝ տալով քաջության և անձնավորության բացառիկ օրինակներ: Ֆրանսիական հրամանատարության կողմից 25 հայ մարտիկներ պարգևատրվեցին «Մարտական խաչ» ջրանշանով: «Հպարտ եմ, որ հրամանատարությանս տակ ունիմ հայկական զորախումբ մը: Ան փայլունորեն կռվեցավ և մեծ բաժին մը ունեցավ հաղթանակին մեջ», 1918 թ. հոկտեմբերի 12-ին Պողոս Նուբար փառային է հեռագրել է. Ալենքիս²⁸: Եվ իրոք, հայ մարտիկների ռազմական գործողությունների շնորհիվ էր, որ դաշնակից զորքերի համար ճանապարհ բացվեց դեպի Դամասկոս և Հալեպ՝ սկսած Մեջդել Յաբա կոչվող ավանից, որտեղ Արարայի ճակատամարտից հետո բանակել էր լեգեոնը:

Այս խոշոր պարտություններից հետո Թուրքիան այլևս ի վիճակի չէր շարունակելու պատերազմը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում՝ բրիտանական «Ագամեմոն» հաճախավում, պինադադար է ստորագրվում Օսմանյան կայսրության և Անտանտի երկրների միջև: Ջինադադարի պայմանները փաստորեն նշանակում էին Օսմանյան կայսրության կործանում: Թուրքիան պարտավորվեց անմիջապես ցրել բանակը, զորքերը դուրս բերել Կիլիկիայից (մինչև 1918 թ. դեկտեմբերի 18-ը), դաշնակիցներին հանձնել ինչպես իր բանակի ողջ ռազմամթերքը, այնպես էլ ռազմագերիներին և տարագրված հայն-

րին, թույլատրել անգլոֆրանսիական ռազմաճակատին անկյնի Բուֆոր և Դարդանել նեղուցներով և դուրս գալ Սև ծով:

1918 թ. վերջերին Կիլիկիայում էին գտնվում Թուրքական 2-րդ (Ադանայի շրջանում) և 7-րդ (Թուրքակ Կալեում) բանակները: Անտիոքում տեղակայվել էր մեկ դիվիզիա: Սակայն պանգլադային դասալքության և հուսալքության պատճառով նրանցից ոչ մեկը լուրջ ուժ չէր ներկայացնում: Համոզված, որ չեն կարող դիմագրավել հակառակորդին, 1918 թ. նոյեմբերի 24-ին նրանք սկսեցին նահանջել դեպի հյուսիս: Միմյանում և Պաղեստինում ֆրանսիական զորքերի հրամանատար Համելենին հրամայվեց հետապնդել թշնամուն և գրավել Կիլիկիան, եթե զորքի թիվը և մարտունակությունը նման հնարավորություն են ընձեռում: Համաձայն հրամանի Կիլիկիան պետք է գրավվեր մինչև 1919 թ. փետրվարի 1-ը²⁹:

Նշենք, որ դեռևս նոյեմբերի 15-ին ֆրանսիական կառավարության որոշմամբ Արևելյան լեգեոնը վերանվանվեց Հայկական լեգեոն (ստեղծվեց նաև սիրիական լեգեոն)³⁰: Ռազմական նախարարության նույն օրվա հրամանով էլ լեգեոնը Բեյրութից պետք է ամբողջությամբ տեղափոխվեր Կիլիկիա՝ ապատագրելու երկրամասը: Բեյրութում կազմավորվել էր ևս մեկ գումարտակ, որով հայ լեգեոնականների թիվը հասել էր 5000-ի:

Ֆրանսիական զորաջոկատների կազմում արշավի ելավ և Հայկական լեգեոնը³¹: Նրան բախտ և պատիվ վիճակվեց առաջինը մտնելու Կիլիկիա: Դեռ 1918 թ. նոյեմբերի 21-ին լեգեոնի 1-ին և 3-րդ գումարտակներն ափ էին իջել Ալեքսանդրետում: Դեկտեմբերի 14-ից 16-ը Մերսինում ափ էին իջել 2-րդ գումարտակը և 3-րդ գումարտակի մի մասը: Ապա 3-րդ գումարտակն ամբողջությամբ տեղակայվում է Մեր-

²⁹Shu E. *Bremond*. La Cilicie en 1919-1920. Paris, 1921, p. 10.

³⁰Shu P. *Redan*. La Cilicie et le Probleme Ottoman. Paris, 1921, p. 35.

³¹Shu նույն տեղում, էջ 74-75:

²⁸ «Նուշամայյան մեծ եղեռնի», էջ 897:

սինում, Պոպանտիում, Միսիսում և Տարսոնում՝ կոտորելով հակառակորդի դիմադրությունը: 2-րդ գումարտակի ուժերով գրավվում են Դյորթ Յոլը, Թոփրակ Կալեն, Իսլահիեն: Ջգալի ուժեր են տեղակայվում Սարաշ և Այնթապ քաղաքներում: Ֆրանսիացի պատմաբան Պ. Ռեդանի վկայությամբ լեզհոնը տեղեկում համարվում էր ի հաշիվ նորակոչիկների, և եթե դաշտային շրջաններից և քաղաքներից հավաքագրված հայերը ռազմական լավ համարում չունեին, ապա «լեռնական հայերը, դրան հակառակ, գերազանց սինվորներ էին»³²:

Փաստորեն մինչև 1918 թ. դեկտեմբերի 20-ը Կիլիկիան գրավվում է դաշակից պորամիավորումների կողմից: Շուտով 19-րդ ցամաքային բրիգադի հետ Ադանա է ժամանում անգլիացի զենեղալ Լեալին. դրանով իսկ մինչև 1919 թ. նոյեմբեր Կիլիկիայում հաստատվում է անգլիական սինվորական իշխանություն, որը հետո փոխարինվում է ֆրանսիականով: Կիլիկիայում ֆրանսիական վերահսկողության նախագահ էր նշանակվել գնդապետ Է. Բրեմոնը:

Մուդրոսի սինադոպարից հետո մոտ 150.000 հայեր վերստին հաստատվել էին Կիլիկիայում՝ հուսալով ապահով և բարեկեցիկ կյանք վարել Ֆրանսիայի հովանու ներքո: Սակայն Կիլիկիայի, մասնավորապես կիլիկիահայության ճակատագիրն արդեն կանխորոշված էր Մ. Քեմալի և Միրիայի ու Հայաստանի կոմիսար նշանակված Ժորժ Պիկոյի բանակցությունների ընթացքում (1919 թ. դեկտեմբերի 5—6) մշակված նախագծով: Սա հիմքն էր ֆրանս-քեմալական ապագա մերձեցման (1921 թ. մարտի 9-ի Լոնդոնի և հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրերը), որով Ֆրանսիան, հետապնդելով իր քաղաքական և տնտեսական շահերը, մտադիր լինելով պահել Միրիան, Թուրքիայից ստանալ իր պետական պարտքը, երկաթուղային և այլ վարձակալություններ (կոնցեսիա), հանձնեց Կիլիկիան և կամա թե ակամա հանցակից դարձավ կիլիկիահայության

նոր ողբերգության: Որպես արդյունք՝ արի քաշվեց 25-30 հազար հայ, իսկ կենդանի մնացածները կրկին բռնեցին արհավիրքներով լի տարագրության ուղին:

Պատահական չէր, որ Մ. Քեմալը պատերազմն սկսեց Կիլիկիայում: Քեմալականները, համաձայն Էրզրումի և Ալվասի համաժողովներում ընդունված որոշումների և 1920 թ. հունվարի 23-ին Անկարայում բացված «Ազգային ուխտի», նպատակ էին հետապնդում պահպանելու Օսմանյան կայսրության տարածքային և պետական ամբողջականությունը, և նրանց ազգայնական մտայնությամբ հայերի գոյությունն անգամ սպառնում էր Թուրքիայի անկախությանը և տարածքային միասնությանը. չէ՛ որ հայերը հետամուտ էին իրենց արդարացի պահանջի լուծմանը՝ ցանկանալով իրենց իսկ բնօրրանում վերականգնել հայկական պետականությունը: Իսկ 1919—1920 թթ. Թուրքիայի ողջ տարածքում միայն Կիլիկիայում էին հայերը հաստատվել համեմատաբար հոծ պահվածով՝ ձգտելով եթե ոչ անկախության, ապա գոնե ինքնավարության, որը մեծ տեղությունների կողմից խոստացվել էր ամենաբարձր մակարդակով: Եվ հետո՝ շատ ավելի՝ հեշտ էր պայքարն սկսել Կիլիկիայում քիչ ուժեր ունեցող Ֆրանսիայի դեմ (1919 թ. Կիլիկիայում և Միրիայում ֆրանսիական պորքերի քանակը չէր անցնում 20.000-ից, թեև 1921 թ. հաշվվում էր 70.000)³³:

Արդեն 1919 թ. հունվարին քեմալականները, համագործակցելով երիտթուրքերի հետ, կազմակերպել էին Ադանայի ռազմաճակատը, որը ընդգրկում էր համարյա ողջ Կիլիկիան: Դրությունը առաջին հերթին շիկանում է Սարաշում (1920 թ. հունվար—փետրվար), որտեղ բնակվում էր 20.000 հայ: Նրանք մոտ 500 լեզհոնականների անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ (1-ին գումարտակի մեծ մասը, մեկ վաշտ 2-րդ գումարտակից և 3-րդ գումարտակի 7—9-րդ վաշտերը) հերոսական ինքնա-

³³ Шу К. Гранкур. Тактика на Ближнем Востоке. М.—Л., 1928, с. 42.

³² Նույն տեղում, էջ 36:



Ֆրանսիական բանակի հայ զոհված կամավորների հուշարձանը
(Ֆրանսիա)

պաշտպանության են դիմում՝ հաջողեցնելով ջախջախիչ ուժի հարվածներ հասցնել թշնամուն: Այդ մարտերում առանձնապես աչքի ընկան լեգեոնականներ Գևորգ Հարությունյանը, Թովմաս Աբրահամյանը, Սմբատ Շահնապարյանը, որոնք օրեր շարունակ հեն էին մղում ս. Սարգիս եկեղեցու ուղղությամբ գրոհող թուրք հրոսակնե-

րին³⁴: 30 հայ լեգեոնականներ Սեդրակ Խըրլազյանի հրամանատարությամբ անկոտրում կամքով պաշտպանեցին քաղաքի կաթոլիկ եկեղեցին՝ փրկելով այնտեղ ապաստանած 3700 հայրենակիցների կյանքը³⁵: Արժե այստեղ բերել

³⁴ Գ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջեյթուն: Նյու Յորք, 1934, էջ 810-811:

³⁵ Տես նույն տեղում, էջ 814-816:

Ֆրանսիացի հեղինակ Կ. Գրանկուրի կարծիքը հայ լեզուականի մասին. «Նա շատ քաջ է... Իր օջախը պաշտպանելիս հայը ցուցաբերում է գովելի եռանդ, համառություն և հնարամտություն, նա մեծ հայրենասեր է»³⁶: Սակայն ամեն ինչ պուր էր, պուր և ապարդյուն, քանի որ փետրվարի 11-ին Ֆրանսիական հրամանատարությունը նահանջի հրաման է տալիս՝ քաղաքը հանձնելով թուրքերին: Ավելի քան 13.000 հայեր սրի քաշվեցին, իսկ մնացածը (8000 հոգի) արտաքրավեցին քննալական իշխանությունների կողմից³⁷:

Մարաշի անկումով Կիլիկիայում քննալական շարժումն էլ ավելի ծավալվեց: Ինչպես նկատել է Մ. Անդերսոնը, «արդեն փետրվարին ազգայնականները ցույց էին տվել իրենց ուժը՝ Ֆրանսիայիներին դուրս քշելով Մարաշից»³⁸:

1920 թ. սկզբներին լարված դրություն էր ստեղծվել նաև Ադանայում և հարակից շրջաններում: Իսկ հուլիսին քննալական ջոկատները ռազմական գործողություններ ծավալեցին: Ուշագրավ է այն իրողությունը, որ, իր դրության վատթարացման համեմատ, Ֆրանսիական հրամանատարությունը վերստին սկսել էր պզալի տեղ և դեր հատկացնել հայկական զինված ուժերի կազմակերպմանը՝ քաջ գիտակցելով, որ ձեռք է բերում վստահելի և մարտունակ դաշնակից: Հիմնականում հենց հայ լեզուականների և նոր կամավորների ուժերով Ֆրանսիական իշխանություններին հաջողվեց Ադանայի շրջակայքը մաքրել հակառակորդից³⁹:

1920 թ. մարտի 14-ին սկսվում է Հաճընի առասպել դարձած դյուցապնամարտը: Բոլոր կողմերից շրջապատված Հաճընը, պենքի և զինամթերքի խիստ

պակաս պզալով, Սարգիս ճեպեճյանի, Արամ Կայծակի, Միհրան Գայանի, Մեսրոպ Շիրտմյանի և այլոց ղեկավարությամբ յոթ ամիս շարունակ անհավասար մարտեր էր մղում թշնամու տասնպատիկ գերակշիռ ուժերի դեմ՝ հուսալով շուտափույթ օգնություն, որը բավմիսս խոստացվել էր Կիլիկիայի Ֆրանսիական իշխանությունների և Կիլիկիայի հայկական Ազգային խորհրդի նախագահ Մ. Տամատյանի կողմից: Արդեն կազմվել էին Հաճընի օգնության 1-ին և 2-րդ արշավախմբերը, բայց Ֆրանսիական զինվորական հրամանատարությունը ոչ միայն արգելում է նրանց շարժվել հայրենակիցներին օգնության, այլև, շրջապատելով, զինաթափում և արտաքսում է Կիլիկիայից: Մնալով միայնակ՝ Հաճընը դատապարտված էր կործանման: Եվ 1920 թ. հոկտեմբերի 15-ին քննալական ջոկատները ներխուժում են քաղաք՝ սրի քաշելով մոտ 8000 հայությանը: Միայն 387 հոգի Արամ Կայծակի գլխավորությամբ կարողանում են ձեռքբեր թշնամու պաշարման օղակը և հասնել Ֆրանսիական գոտի⁴⁰:

Հայ լեզուականները, ինչպես այլուր, այնպես էլ Այնթապում քաջաբար մարտնչեցին թուրք հրոսակների դեմ՝ խիզախության հրաշքներ գործելով: Մոտ մեկ տարի տևած գոյամարտում (1920 թ. ապրիլի 1 — 1921 թ. փետրվարի 8) Ֆրանսիական զորամասերի օգնությամբ Այնթապի հայությունը փրկվեց թուրք ջարդարարների վայրենի կրքերին պոհ գնալուց, սակայն, ավելի ուշ, երբ Կիլիկիան հանձնվեց Թուրքիային, այնթապիները ևս բռնեցին գաղթի ճամփան՝ լքելով հայրենի օջախները:

Ընդհանուր առմամբ՝ «լեզուների կյանքը Կիլիկիո մեջ եղավ վրդովիչ, դառնացուցիչ և հուսահատական: Ամեն արդար ակնկալությամբ, բազում հույվերով և հույսերով հայ զինվորը ոտք դրած էր հայուն արյունով նվիրագործված Կիլիկիո սուրբ հողերուն վրա: Այժմ իր բոլոր

³⁶ Shu K. Гранкур. Тактика на Ближнем Востоке, с. 54.

³⁷ Shu Գ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չեյթուն, էջ 810-811:

³⁸ M. Anderson. The Eastern Question, 1774-1923. New York, 1966, p. 362.

³⁹ Shu «Կիլիկյան տարեցույց», էջ 186: Shu նաև P. Redan. La Cilicie et le Problème Ottoman, p. 106-108.

⁴⁰ Shu Ռ. Գ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1918-1921 թթ., էջ 180:

հույսերը օդը կը ցնդեին: Թշնամին հաջողած էր գրավել կամ գնել համակրանքը հաղթական դաշնակիցներուն, որոնք արդեն որոշած էին դավաճանել ոչ միայն իրենց ձեռքին տակ կռվող վիւնդերին, այլև տարագրութենէն մազապուրծ ազատված և հայ կամավորի կողմն գրավված Կիլիկիո գլխավոր քաղաքն հանդիսացող Ադանայի մեջ օրն օր բազմացող և հարյուր հազարի հասնող հայ խլայակներուն»⁴¹:

Այն պայմաններում, երբ Ֆրանսիան Կիլիկիան հանձնում էր Ռուսքիային, այլևս ձեռնտու չէր Հայկական լեգեոնի գոյությունը, քանի որ նա կարող էր «արգելքներ» հարուցել այդ գործում: Ստեղծված իրավիճակում, հասկանալով դեպքերի վարգայման իրական ընթացքը, կռահելով դրանց տրամաբանական ավարտը, հայ ազգային-քաղաքական ուժերը Կիլիկիան 1920 թ. օգոստոսի 4-ին հռչակում են ինքնավար և անկախ՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո, և ստեղծում են կառավարություն: Բայց ընդամենը մեկ օր անց այդ կառավարությունը ցրվում է Ֆրանսիական իշխանությունների կողմից, և դա առիթ է դառնում հայերի նկատմամբ թուրքերի նոր բռնությունների:

Օրակարգի հարց դարձավ Հայկական լեգեոնի ցրումը. մավրն արել էր իր գործը, մավրը կարող էր հեռանալ: 1920 թ. սկզբից ֆրանսիական իշխանությունները սկսել էին կրճատել լեգեոնի թվաքանակը՝ այն 5000-ից հասցնելով 1500-ի: Իսկ 1920 թ. օգոստոսի 19-ին,

⁴¹ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 161, ց. 1, գ. 60, թ. 13:

Սերի պայմանագրի կնքումից 9 օր անց (այդ պայմանագրով Կիլիկիան մնում էր Ռուսքիային) Մերձավոր Արևելքում ֆրանսիական գերագույն կոմիսար և պորքերի հրամանատար գեներալ Գուրոն, 1-ին պորաբանակի հրամանատար գեներալ Դյուֆրոն և Ռոմիոյին փոխարինած գեղապետ Ֆլի Մեն Մարին ստորագրեցին Հայկական լեգեոնի կազմալուծման հրամանը: Ապա լուծարվեց Շիշմանյանի հայկական միլիցիան և, ինչպես նշվեց վերը, վինաթափ արվեց (1920 թ. սեպտեմբերի 22-ին) Ախարձայի՝ պաշարված Հաճընի ոսկույթյան պատրաստվող 2-րդ արշավախումբը: Օգոստոսի 19-ին հայ մարտիկներին ուղղված հրամանում գեներալ Գուրոն ցինիկորեն հայտարարում էր. «Հայկական լեգեոնի ցրումը ազատ կը կացուցանե Ֆրանսիայի հանդեպ այն պայմանագրութենեն, պոր վեհանձնորեն ստորագրեցիք 1916-ին և 1917-ին»⁴²: Եվ ուրիշ ոչինչ: Մոռացության էին մատնելվում շոսայտրեն տրված խոստումները, հավաստիացումները:

Սակայն Հայկական լեգեոնը կատարեց իր պատմական առաքելությունը: Նա ոչ միայն ռազմական անթերի գործողություններով մեծապես նպաստեց սիրիա-պաղեստինյան ճակատում դաշնակիցների հաղթանակին, այլև հերոսական պայքարով ի չիք դարձրեց կիլիկիահայտությանն ամբողջովին բնաջնջելու քեմալական ծրագիրը և ապահովեց հայրենակիցների քիչ թե շատ անվտանգ արտագաղթը:


⁴² Տես Տ. Հ. Պոյաճյան, նշ. աշխ., էջ 376:

ՎԱՆ ԲԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ, մալոր, պատմական գիտությունների թեկնածու

Օսմանյան Ռուսքիայի երիտթուրքական կառավարությունը 1915 թվականին կայսրության տարածքում՝ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում, իրականաց-

րեց հայ բնակչության ցեղասպանությունը: Այս ոճրագործությամբ թուրքերը նպատակ ունեին իրենց ձեռով և վերջնականորեն լուծելու Հայկական հարցը՝ վերացնելով Արևմտյան Հայաստանում



Վանի բերդը

հայկական պետականության վերականգնման բուն իսկ հնարավորությունը: Օսմանյան իշխանություններն իրականացրին նաև կայսրության մի շարք այլ ազգային փոքրամասնությունների՝ հույների, արաբների, ասորիների մասնակի կոտորածներ:

Տիրող վարչակարգի նման բարբարոսությունը տեղերում հանդիպում էր հայ բնակչության դիմադրությանը: Դրա շնորհիվ հայերի մի մասը փրկվեց, բայց մյուսները զենքը ձեռքներին փոխվեցին: Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Մուշում, Սասունում, Շապին - Գարահիսարում, Սվեդիայում (Մուսա լեռ), Ուրֆայում և այլ վայրերում:

Օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումներին և քրդական ջոկատներին առաջին դիմադրությունը ցույց էր տրվել Վանի վիլայեթում դեռևս 1914 թ. վերջերին: Բայց գլխավոր ինքնապաշտպանական մարտերը տեղի ունեցան 1915 թ. գարնանը Վան քաղաքի հայկական երկու թաղամասերում՝ Այգեստանում և Բաղաքամեջում: Առաջի-

նում բնակվում էր 20000, իսկ երկրորդում՝ 2500 հայ բնակիչ¹: Թաղամասերը գտնվում էին միմյանցից 5-6 կիլոմետր հեռավորության վրա: Նրանց միջև ընկած տարածքում բնակվում էին մահմեդականներ՝ գլխավորապես թուրքեր:

Վանի վիլայեթի և համանուն քաղաքի հայության ոչնչացումը հանձնարարված էր վալի (նահանգապետ) Ջուդեթ բեյին: Վերջինիս մոտ որպես ռազմական խորհրդական գործուղվում է գերմանական բանակի կապիտան (հետագայում գեներալ, ծագումով վենեսուելացի) Ռաֆայել դը Նոգալեալ:

Ջուդեթ բեյի հրամանով օսմանյան զորքերը շրջապատեցին Այգեստանն ու Բաղաքամեջը: Նրանք տեղաբաշխվեցին հետևյալ կերպ. ամրոցի միջնաբերդում տեղակայվեցին հրետանին, երկու վաշտ, քրդական մեկ գումարտակ և

¹ Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը» (ժողովածու), կազմող Հ. Դ. Փափապյան: Ե., 1990, էջ 19, 45, *Joh. Lepsius. Der Todesgang des Armenischen Volkes. Bericht über des Weltkrieges. Potsdam, 1919, S. 307.*

հեծյալ ժանդարմներ, իսկ թուրքական կանտոնավոր բանակի հիմնական ուժերը գտնվում էին քաղաքի հարավ-արևմուտքյան և հարավ-արևելյան մասերում: Մընացած ստորաբաժանումները դիրքավորվել էին ժանդարմական զորանոցներում: Կային 1200-1300 հոգիանոց մի առանձին քրդական ջոկատ՝ Սուլեյման բեյի և լավերի մեկ գումարտակ՝ Չիրքեյ Ահմեդի գլխավորությամբ²:

Մարտական գործողությունների ընթացքում կառավարական ուժերը լրացուցիչ համալրում էին ստանում Բիթլիսից (Բաղեշ) և Էրպրումից (Կարին): Թուրքական զորքերը սպառազինված էին գերմանական արտադրության «Մաուզեր» սիստեմի հրացաններով, 12 ակոսանի և մի քանի տասնյակ տարբեր տրամաչափի ուղղակափող թնդանոթներով, ինչպես նաև գնդացիքներով³:

Վանի պաշարումն իրականացնող թուրքական զորքերի թվաքանակը հաշվվում էր 12000 մարդ: Այս մեծաքանակ և սպառազինությամբ գերազանցող հակառակորդին քաղաքի հայությունն ի վիճակի էր հակադրել մոտ տասն անգամ քիչ ուժ: Այգեստանում կար 1053, իսկ Բաղաքամեջում՝ 100-120 մարտիկ⁴: Նրանց մեծ մասը մինչ այդ ոչ մի առնչություն չէր ունեցել վիճակական ծառայության հետ:

² Shu *R. de Nogales. Four Years Beneath the Crescent.* Transl. from the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis. N. Y., London, 1926, pp. 75, 82.

³ Shu Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 43, «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ: Ե., 1991, էջ 347, Հայաստանի Հանրապետության պետական պատկերասրահ, «Փանոս Թեղեմեկյանի հուշեր», ֆ. 30, գույք 423, թ. 409, *W. D. Allen, P. Muratoff. Caucasian Battlegrounds. A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921.* Cambridge, 1953, p. 299; *R. de Nogales. Four Years Beneath the Crescent*, p. 75.

⁴ Shu *Ս. Ս. Համբարյան*, Վանի 1915 թ. հերոսամարտը: Պատմա-բանասիրական հանդես, 1985, հմ. 2, էջ 34, «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 347:

Այս ամենը հնարավորություն տվեց թուրքական ուժերին մարտական գործողությունների սկզբնական շրջանում որոշակի գերազանցություն ունենալու: Հաշվի առնելով ուժերի նման հարաբերակցությունը՝ հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը ղեկավարող Ջինվորական մարմինները ընտրում են պաշտպանական մարտավարություն⁵:

Այգեստանը բաժանվեց յոթ պաշտպանական շրջանների՝ 79 դիրքերով, իսկ Բաղաքամեջը՝ չորս շրջանների՝ 25 դիրքերով: Շտապ կարգով փորվեցին խրամատներ, անմիջական մարտական շփման տեղամասերում գտնվող տները ամրացվեցին և միմյանց հետ կապվեցին հաղորդակցության ստորգետնյա ուղիներով: Ողջ Այգեստանը շրջապատվեց կավն պատով, որի մեջ հրակնատներ էին բացվում⁶: Կառուցման և ամրացման աշխատանքները կատարվում էին գրեթե անվերապես գիշերները: Մարտական գործողությունների ընթացքում պաշտպանական կառույցներն անընդհատ կատարելագործվում էին: Հետագայում Վան մտած ռուսական ուժերի հրամանատար գեներալ Նիկոլայը դրվատեց

⁵ Այգեստանի Ջինվորական մարմնի անդամներն էին՝ Արմենակ Եկարյանը (ռազմական ղեկավար), Կայծակ Առաքելը (Տիգրան Արաջյան), Փանոս Թեղեմեկյանը, Արամ Մանուկյանը և Բուլդարացի Գրիգորը: Բաղաքամեջի հայոց դիմադրության կազմակերպիչներն էին՝ Հակակ Կոստյանը (ղեկավար), Լևոն Գալճյանը, Միհրան Թորոմանյանը և ուրիշներ: Ռ. դը Նոգալեան և Վանում իտալական հյուպատոսական գործակալ Գ. Սթորդոնին առանձնացնում են Ա. Մանուկյանին, որը աչքի էր ընկնում իր կազմակերպական մեծ աշխատանքով: Shu «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 348, *R. de Nogales. Four Years Beneath the Crescent*, p. 27.

⁶ Shu *Ս. Ս. Մեծ դեպքեր Վասպուրականում 1914-1915 թվականներին*: Ե., 1917, էջ 224, 232, «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 347, Հ. *Կոստյան*, Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսապատումը: Թեհրան, 1966, էջ 57-59, *C. D. Ussher, G. H. Knapp. An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War.* Boston and N. Y., 1917, p. 255; *R. de Nogales. Four Years Beneath the Crescent*, p. 64; *J. Bryce. The Treatment of Armenians in Ottoman Empire, 1915-1916.* London, 1916, p. 35.

վանեցիներին նման ամբողջություններ կառուցելու համար:

Իտալական հյուպատոսական գործակալ Գ. Սբորդոնին վկայում է. «Նրանք (հայերը — Ռ. Ս.) կազմակերպվեցին հիա-

կառուցվածքը⁸: Ջինվորական մարմիններից յուրաքանչյուրն ուներ նաև պահեստային ջոկատ:

Ինքնապաշտպանությանը իրենց օժանդակությունը ցույաբերեցին ամե-



Ամերիկացի բժիշկ Աշերը կնոջ՝ Էլիզաբեթի հետ վիրավորին բուժելիս

նալի արագությամբ և խորաթափանցությամբ, ստեղծեցին գլխավոր շտաբ, ճարտարագործական ջոկատ, հրաձիգների գումարտակ, կարմիր խաչի և վիրակապման կետեր, ոստիկանություն: Փորեցիկ խրամատներ, կառուցեցին բարիկադներ և այնքան խոհեմ եղան, որ պաշտպանական գործողության եղանակ ընդունեցին, որպեսզի խուսափեն անօգուտ կորուստներից, ինչպես նաև արգելեցին աննպատակ կրակը⁷:

Յուրաքանչյուր պաշտպանական շրջան ուներ իր հրամանատարը: Մարտիկները բաժանված էին տասնյակների, որոնք ունեին իրենց հրամանատարները: Ամեն մի դիրք ուներ կապավոր, հետախույզ և սանիտար: Ուժերի նման բաժանումը հիշեցնում էր հայդուկային խմբի մարտավարական

րիկյան միսիոներներ բժիշկ Քլարենս Աշերը, նրա կինը՝ Էլիզաբեթը, և Էռնեստ Յարրուն: Ք. Աշերը հայերին հանձնեց ամերիկյան հիվանդանոցի դեղատոունը և, կնոջ ընկերակցությամբ, իր բժշկական ունակություններն ի սպաս դրեց Այգեստանի հայության օգնության գործին: Իսկ Է. Յարրուն գործուն մասնակցություն ունեցավ թաղամասի պաշտպանական կառույցների կազմակերպմանը⁹:

Այգեստանի հայության դիմադրությանն ականատես ամերիկյան միսիոներ Գ. Քնապն իր վկայություններում նշում է ողջ բնակչության միահամուռ մասնակցությունը ինքնապաշտպանության գործին: Նա հատուկ շեշտում է թաղամասի ներքին կար-

Ծնկաձև լիսեռի պտտման այնպիսի արագությունների հասնելը, որոնց դեպքում տեղի է ունենում բավարար խառնուրդագոյացում, դժվարանում է դիմադրության մոմենտի մեծացման հետևանքով, ինչը կապված է յուղի մածուցիկության աճման հետ: Օրինակ՝ 0° C-ից մինչև -20° C օդի ջերմաստիճանի նվազման դեպքում ՄՏ—16Պ յուղի մածուցիկությունն աճում է ավելի քան 450 անգամ: Դա դժվարություններ է առաջացնում շարժիչները գործարկելիս, ընդ որում առավել մեծ դժվարություններ՝ դիզելային շարժիչների դեպքում: Գիպելային վառելիքի վատ խառնուրդագոյացման պատճառներն են, նախ՝ դիզելային վառելիքի մածուցիկության աճումը շրջապատի օդի ջերմաստիճանի նվազման համեմատ, երկրորդ՝ վառելիքի

բոցավառումն ապահովելու համար սեղմման տակտի վերջում 350° C-ից ոչ ցածր ջերմաստիճան ստանալու անհրաժեշտությունը: Սեղմման տակտի T_u ջերմաստիճանը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$T_u = \frac{T_d (P_u)}{P_d} \frac{(n-1)}{n}$$

որտեղ T_d -ն ներքաշվող օդի ջերմաստիճանն է՝ °C,

P_u -ն՝ ճնշումը տակտի վերջում՝ կգու/սմ²,

P_d -ն՝ օդի ճնշումը ներքաշման ժամանակ՝ կգու/սմ²,

n -ը՝ սեղմման պոլիտրոպի ցուցիչը:

Որքան փոքր են ծնկաձև լիսեռի պտտման արագությունը և ներքաշվող օդի ջերմաստիճանը, այնքան փոքր է n մեծությունը:

Ներքաշվող օդի ջերմաստիճանի բարձրացման համար անհրաժեշտ է շարժիչի տաքացում, քանի որ ինչքան մեծ է ծնկաձև լիսեռի պտտման արագությունը, այնքան սեղմման տակտի վերջում բարձր է օդի ջերմաստիճանը, և հետևաբար ավելի հեշտ է կատարվում շարժիչի գործարկումը: Սակայն յուրի մածուցիկության աճումը և տարբեր մետաղների գծային ընդարձակման գործակիցների արժեքների տարբերության պատճառով առանցքակալներում բացակների փոքրացումը հանգեցնում են այն բանին, որ ծնկաձև լիսեռի պտտման ժամանակ դիմադրության մոմենտը մեծանում է, ինչի հետևանքով գործարկային պտույտները նվազում են:

Հայտնի է, որ

$$M_u = M_n + M_f + M_2,$$

որտեղ M_u -ն սեղմման հետևանքով ստացվող մոմենտն է՝ կգու.սմ,

M_n -ն՝ դիմադրության մոմենտը՝ կգու.սմ,

M_f -ն՝ իներցիայի մոմենտը՝ կգու.սմ,

M_2 -ն՝ շփման ուժերի հաղթահարման համար անհրաժեշտ մոմենտը՝ կգու.սմ:

M_n -ի և M_f -ի արժեքները մեծ չեն, իսկ M_2 -ն խիստ մեծանում է ջերմաստիճանի նվազման համեմատ: Օրինակ՝ -20° C-ի դեպքում $B-2$ շարժիչի ծնկաձև լիսեռի պտտման համար անհրաժեշտ է հաղթահարել դիմադրության այնպիսի մոմենտ, որի մեծությունը մոտ է շարժիչի կողմից ստեղծվող մոմենտի մեծությանը:

Շարժիչի օգտագործման հիմնական միջոցը ընթացարկիչն է (ստարտեր): $B-2$ շարժիչի գործարկումն ապահովելու համար ծնկաձև լիսեռի պտտման անհրաժեշտ արագությունը մեկ րոպեում 100—120 պտույտ է: Հայտնի է, որ խարսխիկի պտտման արագությունը փոքրանում է ծանրաբեռնվածության աճման համեմատ: Այդ պատճառով, երբ ջերմաստիճանն իջնում է, փոքրանում են ընթացարկիչի և, համապատասխանաբար, ծնկաձև լիսեռի պտտման արագությունները: Բացի դրանից, ջերմաստիճանի նվազման համեմատ փոխվում են ուժակուտակիչ մարտկոցների էլեկտրական հատկությունները, աճում է էլեկտրոլիտի մածուցիկությունը: Մարտկոցների ունակության նրվազումը հանգեցնում է ընթացարկիչի ստեղծած պտտման մոմենտի նվազմանը: Այսպիսով՝ ուժակուտակիչ մարտկոցները դառնում են նվազ գործունակ հենց այն ժամանակ, երբ գործարկման համար էլեկտրաէներգիայի պահանջարկը առավելագույնն է:

Տարվա ցուրտ շրջանում շատ կարևոր է նաև շարժիչի առավել նպատակահարմար ջերմակարգի պահպանումը. շարժիչների հաճախակի գերսառեցումը, երբեմն մինչև 40—50° C, մանրակների մաշվածության աստիճանի՝ մեծացման և ծառայության ժամկետի կրճատման գլխավոր պատճառներից մեկն է: Հարկ է նշել շարժիչների մանրակների մաշվածության մեծացման հետևյալ պատճառները.

ա) Դիպելային վառելիքում պարունակվում են մինչև 0,2 % ծծմբային միացություններ: Այրման ժամանակ դրանք վերածվում են ծծումբի օքսիդի, որը, միանալով ջրի գոլորշիների հետ, առա-

ջայնում է ծծմբաթթու, իսկ վերջինս առաջայնում է կոռոզիա, սաստկացնում է գլանների պարկուճների մաշումը:

բ) Վառելիքի խտացումը և յուղվածքի նոսրացումը հանգեցնում են յուղաթաղանթի ամրության անկման, չոր շփման մասնաբաժնի մեծացման, քերաման և ջերմային մաշվածքների աճման:

գ) Ջերմակարգի բարձրացումը նույնպես մեծացնում է շարժիչի մաշվածքները. յուղը նոսրանում և այրվում է, այսինքն՝ ավելանում է քերման մաշվածքը: Փոխվում է մխոցի և գլանի պատի միջև բացակը, հետևաբար փոքրանում է շարժիչի հպորությունը, և ավելանում է վառելիքի ծախսը:

դ) Ցածր ջերմակարգերում երկարատև աշխատանքը հանգեցնում է դիվելային շարժիչների ձյութապատման. չայրված վառելիքի և այրման խցիկները ներթափանցող յուղի քայքայման ու օքսիդացման հետևանքով ձյութապատվում են գլանների օղակները, կափույրները և պատերը: Խիստ ձյութապատման դեպքում հնարավոր են մխոցների լրամխում և կափույրների կախվածություն ուղղորդիչ ականոցներում:

ե) Միջավայրի ցածր ջերմաստիճանները դժվարացնում են ուժային փոխանցման մեխանիզմի, ընթացային մասի և կառավարման հաղորդակների բընականոն աշխատանքը, յուղի մեծ մածուցիկության պատճառով վատթարանում է մեխանիզմների շփման մակերևութային յուղումը, ինչն առաջ է բերում մանրակների մաշվածության մեծացում:

Տեխնիկայի նախապատրաստումը օդի ցածր ջերմաստիճաններում շահագործման՝ կազմակերպվում է հատուկ ծրագրով, որի մեջ ներառվում են հետևյալ միջոցառումները՝

— անձնական կազմի պատրաստում՝ կապված ձմեռային շրջանում տեխնիկայի շահագործման առանձնահատկությունների, տեխնիկայի ու սպասարկման միջոցների նախապատրաստման կարգի հետ,

— աշխատատեղերի կազմակերպում,

— աշխատակիտերի լրակազմում

աշխատակազմով, սարքավորումներով և գործիքներով,

— տեխնիկական սպասարկման և մասնագիտացված աշխատանքների կետերում կատարվող աշխատանքի բովանդակության որոշում,

— աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների որոշում,

— շահագործման նյութերով ապահովման կարգի որոշում, տեխնիկայի լրակազմում մեքենաների անցունակության բարձրացման, ջերմացման և տաքացման միջոցներով,

— հավաքակալային տարրերի և հավաքակալային-մեքենակալային սարքավորումների նախապատրաստում,

— անվտանգության տեխնիկայի պահանջների կատարման ապահովում:

Անձնական կազմի պատրաստումը կազմակերպվում է այն հաշվով, որ անձնակազմերը ձեռք բերեն մեքենաները շահագործման ձմեռային շրջանին փոխադրելու աշխատանքների ճիշտ կատարման, մեքենաները արագորեն մարտական պատրաստության բերելու գործնական հմտություններ, անձնական կազմին սովորեցվի տեխնիկայի գրագետ կերպով օգտագործել ու սպասարկել մեքենաները և այլ դիվելային տեխնիկա օդի ցածր ջերմաստիճաններում:

Հավաքների վերջում անձնական կազմից ստուգարք է ընդունվում ձմեռային շրջանում մեքենաների շահագործման կանոններից, և զորամասում մեքենաների վարման թույլտվության վերաբերյալ հրաման է տրվում:

Մուցման համակարգը ձմեռային շահագործման նախապատրաստելիս, բացի SU—1-ի կամ SU—2-ի կատարումից, լրացուցիչ կարգով իրագործվում են հետևյալ միջոցառումները. բացվում են օդափոխ բերանակալները, ստուգվում է տաքացուցիչի գործունակությունը, վառելիքը փոխադրվում է ձմեռային տեսակներով:

Ամենից առաջ անհրաժեշտ է թափել մնացուկը կոպիտ և նուրբ մաքրման սրտիչների պատյաններից, լվանալ կոպիտ մաքրման սրտիչը, իսկ վառելիքի

նուրբ մաքրման փոփոխություններում փոխել վրտող տարրերը: Ամառային վառելիքը լցնում են վաթորոք նախապատրաստված մաքուր ամանների մեջ: Բաքերը ձրմեռային վառելիքով լցնելուց հետո գործարկում են շարժիչը և թողնում, որ այն 10-15 րոպե աշխատի պարապ ընթացքով (որպեսզի փոփոխները, փոփոխակները և վառելիքային սարքերը մաքրվեն ամառային վառելիքի մնացորդներից):

Մուուցման համակարգի, հետևաբար և շարժիչի բնականոն աշխատանքի հիմնական պայմաններից մեկը վառելիքի մաքրությունն է: Նրա վիճակը ստուգելու համար վերցնում են փորձանմուշ վառելիքը լցնում են 40-45 մմ տրամագծով ապակյա գլանի մեջ: Այն պիտի թափանցիկ լինի և չպարունակի կողմնակի կախություններ և նստվածքային խառնուրդներ, հատկապես ջուր: Մեխանիկական խառնուրդներն ստաջ են բերում վառելիքային պոմպերի սուլպակային փուլերի մեծ մաշվածք, իսկ ջուրը՝ մանրակների կոռոզիա: Բացի դրանից, ջուրը քայքայում է նուրբ մաքրման փոփոխների ստվարաթղթե վտող սալիկները: Ձմռանը հնարավոր են շարժիչի աշխատանքի խափանումներ՝ վառելիքատարներում և փոփոխներում սառչել խցանումների պատճառով:

Պետք է նկատի ունենալ, որ եթե բաքերը լցված են ոչ լրիվ, ապա ցուրտ ժամանակ նրանց ներքին պատերին կոնդենսատ է առաջանում: Լիքը բաքերում դա բացառված է:

Սառնցման համակարգի մեջ լցնում են ցածր ջերմաստիճաններում սառչող հեղուկ: Հեղուկը լցնում են ընդարձակման բաքի չափիչ սանդղակի ստորին աստիճանից ցածր մակարդակով (ջեռուցիչների անջատման ծորակի բաց դիր-

քով): Գործարկելով շարժիչը՝ թողնում են, որ այն 3—5 րոպե աշխատի ծնկաձև լիսեռի պտտման 13,3—16,6 վրկ.⁻¹ հաճախականությամբ (800—1000 պտույտ/ր), ապա շարժիչը կանգնեցնում են և ըստուգում հեղուկի մակարդակը: Անհրաժեշտության դեպքում համակարգի մեջ հեղուկ են լցնում մինչև նորման:

Բացառիկ դեպքերում թույլատրվում է ձմռանը սառնցման համակարգի մեջ ջուր լցնել: Դրանից անմիջապես հետո անջատում են ջեռուցիչները և գործարկում շարժիչը: Օդի մինչև -30° C ջերմաստիճանի դեպքում նախ բացում են արտահոսման ծորակներն ու կափույրը և համակարգի մեջ տաք ջուր լցնում այնքան, մինչև որ այն սկսի դուրս հոսել կափույրից: Ապա փակում են արտահոսման ծորակներն ու կափույրը և համակարգի մեջ դարձյալ տաք ջուր լցնում: Շարժիչի գործարկումից հետո բացում են ջեռուցիչների ծորակը և լրացնում համակարգը:

Ցածր ջերմաստիճանները դժվարացնում են ուժային փոխանցման, ընթացային մասի և կառավարման հարդակների բնականոն աշխատանքը: Մեխանիզմներում յուղի մեծ մածուցիկությունը ոչ միայն մեծացնում է դիմադրությունը պտտմանը, այլև մանրակների մաշվածքի աճման պատճառ է դառնում, քանի որ վատթարանում է շփման մակերևութների յուղվածքը: Այդ պատճառով չպետք է շարժվել բարձր փոխանցումներով, քանի դեռ յուղը մեխանիզմներում չի տաքացել:

Հոդվածում շարադրված հանձնարարականները փորձով ստուգված են մարտական տեխնիկական ձմեռային պայմաններում շահագործման նախապատրաստելու և շահագործելու ընթացքում:

БОЕВАЯ ПОДГОТОВКА

ОСОБЕННОСТИ ЭКСПЛУАТАЦИИ ТЕХНИКИ В ЗИМНИХ УСЛОВИЯХ

Մ. Ա. ԿԱՊԱԼՅԱՆ, ՍՈՒՄԱՐՍԿ

РЕЗЮМЕ

Климат на большей части нашей республики резко континентальный, с сухим жарким летом и холодной ветреной зимой. Отрицательное воздействие климатических условий на работу боевой техники усугубляется горным ландшафтом с преобладающим порывистым ветром. В подобных условиях эксплуатация самоходной техники и других устройств, оснащенных двигателями, сильно затруднена, снижается коэффициент использования их возможностей.

Для полного использования высоких боевых и технических возможностей машин в зимних условиях требуется проведение специальных технических и организационных мероприятий. Переход на зимний период осуществляется при температурах воздуха ниже 5°C . При подготовке техники к зимнему периоду эксплуатации проводят очередное техническое обслуживание в объеме ТО-1 или ТО-2. Необходимо также проведение некоторых специальных работ по обслуживанию механизмов, систем вооружения, средств связи. Эти работы указаны в руководствах по эксплуатации машин каждой марки.

Особенностями зимнего периода являются низкая температура окружающего воздуха, наличие снежного покрова и сильные ветры.

Низкая температура воздуха влияет на:

— физические свойства топлива, смазочных материалов, охлаждающей жидкости;

— тепловое состояние агрегатов и сопряжений машин;

— электрические характеристики аккумуляторных батарей;

— механические качества металлов и резин.

Изменение физических свойств топлива приводит к резкому увеличению длительности процесса горения в холодных двигателях и снижению его эффективности. Ухудшается также смесеобразование и воспламенение. Тепловые потери при сжатии и расширении, особенно при первых оборотах коленчатого вала, возрастают. Достижение таких скоростей вращения коленчатого вала, при которых происходит удовлетворительное смесеобразование, затрудняется из-за возрастания момента сопротивления. Последнее обстоятельство связано с увеличением вязкости смазочных материалов при низких температурах. Возрастание момента сопротивления особенно сильно сказывается при запуске двигателей, особенно — дизельных. Ухудшение смесеобразования происходит по двум причинам: из-за увеличения вязкости дизельного топлива с понижением температуры окружающего воздуха и вследствие необходимости достижения в конце такта сжатия значений температуры не ниже 350°C для обеспечения воспламенения топлива.

Для повышения температуры всасываемого воздуха необходим разогрев

двигателя, так как чем больше скорость вращения коленчатого вала, тем выше в конце такта сжатия температура воздуха. Следовательно, легче осуществляется запуск двигателя. В то же время, из-за различия в значениях коэффициента линейного расширения для разных металлов, зазоры в подшипниках уменьшаются. Если учесть, что при низких температурах сильно возрастает вязкость масла, то понятно, что два последних обстоятельства способствуют резкому возрастанию момента сопротивления при проворачивании коленчатого вала. Вследствие этого пусковые обороты снижаются. Например, для двигателя В-2 при -20°C для вращения коленчатого вала необходимо преодолеть момент сопротивления, по величине близкий к создаваемому самим двигателем моменту.

Основным средством для запуска двигателя является стартер. Известно, однако, что с увеличением нагрузки скорость вращения якоря, а следовательно и коленчатого вала, снижается. Кроме того, с понижением температуры уменьшается емкость аккумуляторных батарей, а следовательно, снижается вращающий момент, создаваемый стартером. Таким образом, аккумуляторные батареи оказываются менее работоспособными именно тогда, когда потребность в электроэнергии для запуска двигателя наибольшая.

Следует подчеркнуть, что частые переохлаждения двигателей приводят к повышению износа его деталей и сокращению срока службы. Одной из основных причин повышенного износа является коррозия. Она вызывается серной кислотой, получающейся в результате соединения с парами воды оксидов серы, образующихся при сгорании сернистых соединений, содержащихся в дизельном топливе (их концентрация достигает 0,2%). Другой важной причиной является возрастание абразивного и теплового износа вследствие конденсации топлива и разжижения смазки, приводящих к снижению прочности масляной пленки и увеличению сухого трения.

Повышение теплового режима также увеличивает износ двигателей из-за разжижения масла. Зазор между поршнем и стенкой цилиндра возрастает, следовательно, падает мощность двигателя и увеличивается расход топлива.

Длительная работа при пониженном тепловом режиме приводит к осмолению дизельных двигателей в результате разложения и окисления несгоревшего топлива и попавшего в камеру сгорания масла. При сильном осмолении возможно заклинивание поршней в цилиндрах и зависание клапанов в направляющих втулках.

Низкие температуры среды затрудняют нормальную работу механизма силовой передачи, ходовой части и приводов управления, приводят к повышению износа деталей из-за ухудшения качества их смазки.

Подготовка техники к эксплуатации при низких температурах воздуха организуется по специальному плану. Из необходимых мероприятий, включаемых в него, отметим следующие:

— подготовка личного состава по вопросам особенностей эксплуатации техники в зимний период и порядка подготовки техники и средств обслуживания;

— подготовка рабочих мест;

— определение содержания работы постов техобслуживания и специальных работ;

— *определение порядка обеспечения эксплуатационными материалами, укомплектование техники средствами повышения проходимости, утепления и обогрева;*

— *обеспечение выполнения требований техники безопасности.*

Подготовка личного состава организуется с таким расчетом, чтобы экипажам привить практические навыки в правильном выполнении работ по переводу техники на зимний период эксплуатации, в быстром приведении техники в боевую готовность, научить личный состав технически грамотно использовать и обслуживать технику при низких температурах среды.

При подготовке системы питания к эксплуатации в зимних условиях, кроме ТО—1 или ТО—2, необходимо дополнительно провести следующие мероприятия: открывание заслонок воздухоочистителя, проверка работоспособности подогревателя, замена топлива на зимние сорта.

При замене топлива необходимо слить отстой из корпусов фильтров грубой и тонкой очистки. Фильтр грубой очистки промыть, а в фильтрах тонкой очистки заменить фильтрующие элементы. Прежде чем в систему залить зимнее топливо, необходимо проверить его качество. Для проверки его состояния необходимо взять пробу и убедиться в отсутствии посторонних примесей, особенно — воды. После заправки баков топливом необходимо запустить двигатель и дать ему проработать на холостом ходу минут 10-15. При этом остатки летнего топлива удаляются из фильтров, трубопроводов и топливной аппаратуры.

Следует учесть, что если в холодное время баки заправлены не полностью, то на их стенах образуется конденсат. В полных баках это исключено.

Систему охлаждения заливают жидкостью, замерзающей при низких температурах. В исключительных случаях допускается зимой систему охлаждения заправлять водой. При этом необходимо принять соответствующие меры.

Необходимо учесть, что в зимних условиях для обеспечения правильной эксплуатации техники нельзя двигаться на высоких передачах до тех пор, пока масло не разогреется.

Грамотная эксплуатация техники и вооружения, их содержание в исправном состоянии, постоянно готовыми к боевому применению и обеспечению выполнения плана боевой подготовки являются главной задачей всего личного состава ВС.

COMBAT TRAINING

PECULIARITIES OF USING MACHINERY UNDER WINTER CONDITIONS

SH. A. TAPALTSIAN, Colonel

SUMMARY

Most parts of Armenia have a severe continental climate with hot, dry summers and cold, windy winters. The negative influence of climatic conditions on combat equipment is made worse by a rugged, wind-swept, mountainous landscape. Under such conditions, the

use of self-propelled vehicles and other equipment powered by engines, is very difficult. The efficiency of their performance is compromised.

In order to fully use the high combat and technical capabilities of vehicles under winter conditions, special technical and maintenance arrangements must be made. The transition to winter operations occurs when the air temperature falls below $+5^{\circ}\text{C}$. During the preparation of equipment for winter, a regular technical maintenance (TM) at the first or second level is carried out. It is necessary to do this work on mechanisms, machinery, weapon systems, and communications equipment. These procedures are found in the specific vehicle manuals.

The peculiarities of winter include low air temperature, snow cover, and strong winds.

Low temperatures affect:

- the physical characteristics of fuels, lubricants, anti-freeze liquids;
- the thermal condition of machine groups and machine linkages;
- the mechanical characteristics of metals and rubbers.

Alterations in the physical characteristics of fuels cause a sharp increase in the time of the burning process in cold engines, and a reduction of efficiency. The air-fuel mixture is worse — as is the ignition process. The thermal losses during compression and expansion, especially during the first few revolutions of the crankshaft, are increased. Achieving the correct crankshaft RPM for a satisfactory mixture is made more difficult because of the increased moment of resistance. This resistance is linked to the increase of the viscosity of lubricants at low temperatures and influences the start-up of engines, especially diesel engines. The worsening mixture characteristics is caused by two reasons: the increase of the viscosity of diesel fuel in inverse proportion with the temperature of the ambient air, as well as by the necessity (at the end of the compression cycle) of having a temperature of at least $+350^{\circ}\text{C}$ in order to provide for fuel ignition.

To increase the temperature of the intake air, the engine needs to be warm because the greater rate of rotation of the crankshaft means a higher air temperature at the end of the pressure cycle. Thus, the engine start is easier. In that time, because of the differences in the values of linear expansion coefficients for different metals, the bearing clearances are diminished. If we take into account that low temperatures increase the viscosity of oil, it is clear that these last two circumstances promote a sharp increase of the moment of resistance during the rotation of the crankshaft. Owing to this, the starting RPM's are lower. For the B-2 engine, for example, at a temperature of -20°C , the value of the rotation of the crankshaft is close to the moment of the engine.

The usual way to start an engine is with a starter. It is known, however, that with increasing loads, the rotational velocity of the windings, and thus of the crankshaft, is lowered. Furthermore lower temperatures diminish batteries' output, and this lowers the moment of rotation produced by the starter. Thus, batteries are least efficient when electrical output is most required.

It is necessary to underline, that frequent freezing of engine parts increases their wear and tear and diminishes their life-expectancy. One of the reasons of increased wear and tear is corrosion. It is provoked by sulfuric acid, which is formed as a result of combining sulfur oxides with atmospheric water. These oxides are created during the burning process of sulfuric compounds found in diesel fuel (their concentration may reach 0,2 %). The other important reason is the increase of abrasive and thermal wear and tear through fuel condensation and dilution of lubricants. This lowers the integrity of the oil film and increases dry friction.

Heating also increases the wear and tear of engines because of oil dilution. The clearance between pistons and cylinder walls widens — engine power decreases and fuel consumption increases.

The long-term effect of working under lower thermal regimes is the deposit of tar in

diesel engines. This is a result of the decomposition and oxidation of non-burnt fuel and oil contamination in the burn-chamber. Severe tarring may jam the pistons and seize the valves in the guide bushings.

Cold weather makes the use of power transmission mechanisms more difficult. Moving parts such as gears and drives are under greater stress thereby increasing wear and tear of components caused by deteriorating lubricant quality.

Preparing such equipment for use under severe conditions is implemented according to a special schedule which includes:

- personnel training for the peculiarities of the equipment as used in winter and the procedures to prepare the equipment and servicing tools;*
- preparation of the work-place;*
- determination of the issues related to service centers and locales for special services;*
- determination of the procedures to supply operational materiel;*
- preparation of vehicles for operation in rugged terrain and cold weather;*
- providing for technical security requirements.*

The intent of personnel training is to inculcate practical skills in crew members to implement correctly the transfer of equipment from summer to winter use. They must also rapidly bring the equipment to a combat readiness status. They must also be trained to use and service equipment in cold weather.

During the preparation of the fuel system for use in winter, whether at the first or second level of TM, the following need to be done:

- opening the air filter dampers,*
- checking the proper functioning of the heater,*
- replacing with winter fuel types.*

During the fuel replacement, it is necessary to pour out the sediment from the filters - both coarse and fine types. The coarse filter must be washed and the cartridge of the fine filter must be replaced. Before refueling with winter grade fuel in the system, it is necessary to check fuel quality. One must check for the absence of foreign materials, especially water. After refueling, the engine must be started and idled for filters, tubes and other fuel devices.

Unless tanks are completely filled in winter, condensation may form.

Anti-freeze is used in the cooling system. In exceptional cases, it may be appropriate to use plain water in the system but it is necessary to take proper precautions.

Under winter conditions, it is prohibited to drive in high gear before ensuring that the transmission oil has heated sufficiently.

The proper use of equipment and arms, their maintenance in good condition and permanent combat readiness, and the implementation of combat training plans is the main task of all personnel in the Armed Forces.

ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐՈՒՄ

ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՀԱԿԱԿԵՏԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ռ. Վ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ

Իր գոյության առաջին օրերից Հայաստանի Հանրապետությունն անշեղորեն հետևում է խաղաղ գոյակցության ՄԱԿ-ի հռչակած սկզբունքներին ու նորմերին: Դրանից ելնելով՝ Հայաստանը գործունե կերպով մասնակցում է ամբողջ աշխարհի և մասնավորապես մեր տարածաշրջանի բոլոր խաղաղարար գործընթացներին, հարում է միջազգային անվտանգության ապահովման տարբեր համակարգերին: Սակայն տարածաշրջանում առկա բարդ աշխարհաքաղաքական պայմաններում, երբ պետք է հաշվի առնել հարևան Ադրբեջանի Հանրապետության ագրեսիվ նկրտումները, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համար նրա ՁՈՒ-ից այս առումով պահանջվում է ցուցաբերել սովորականից մեծ պոտենցիալ և մշտապես գտնվել բարձր մարտական պատրաստության վիճակում: Թեև սա վերաբերում է ՀՀ-ի ՁՈՒ-ի կազմի մեջ մտնող բոլոր պորատեսակներին, սակայն հատուկ պահանջներ են ներկայացվում ՀՕՊ-ի պորքերին: Ամագրում «ՀՕՊ-ի պորքերում» խորագրով նախորդ հրապարակումներից ընթերցողին արդեն հայտնի է, որ ՀՕՊ-ի պորքերի ռադիոտեխնիկական ստորաբաժանումները պարտավոր են իրենց պորքերին՝ և ազգաբնակչությանը ժամանակին իրապնելի հակառակորդի հարձակման առավել շարժուն միջոցների՝ օդային հարձակման միջոցների մասին¹: Ուստի ՀՕՊ-ի պորքերում մարտական հերթապահության կազմակերպմանն ու կատարմանը ներկայացվող հիմնական պահանջների խմբությունը օգտակար

կլինի ոչ միայն ՀՕՊ-ի, այլև ընդհանրապես ՀՀ-ի ՁՈՒ-ի բոլոր սինժանայողների համար:

Տեսողական դիտարկման պահակակետերում (ՏԴՊ) հերթապահությունը մարտական առաջադրանքի կատարում է: Այն իրականացվում է օդային (գետնի վրայի) իրադրության անընդհատ տեսողական դիտարկման և հայտնաբերված օդային օբյեկտների ու գետնի վրայի իրադրության մեջ փոփոխությունների վերաբերյալ տվյալները ժամանակին ՀԿ (ԿԿ) հաղորդելու նպատակով:

Տեսողական դիտարկման պահակակետերը սարքավորվում են պորամասերի և ստորաբաժանումների հրամանատարական կետերին և կառավարման կետերին կից և օդային իրադրության մասին տեղեկության լրացույցիչ աղբյուրներ են:

Տեսողական դիտարկման պահակակետերի դիրքը պետք է ապահովի օդային տարածության դիտելիությունը բոլոր ուղղություններով և հնարավորին չափ հեռու լինի կողմնակի աղմուկների աղբյուրներից:

Տեսողական դիտարկման պահակակետերում մարտական հերթապահություն կատարելու համար նշանակվում են հերթապահ դիտորդներ, որոնք մտնում են ստորաբաժանման, հրամանատարական կետի մարտական (կրճատված մարտական) անձնախմբի կազմի մեջ:

Հերթապահություն կատարել թույլատրվում է այն սինժաններին և սերժանտներին, որոնք ունեն բարձր բարոյագործական հատկություններ, լավ տեսողություն և լսողություն, հանձնել են ստուգարքներ տեսողական դիտարկում կատարելու և դիտարկման սարքերի ճիշտ շահագործումը, խնամքը և

¹ Տես «Հայկական բանակ», 1995, N 4, N 5-6:

պահպանումն իրականացնելու իմացություննից ու կարողություննից:

Հերթապահ դիտորդը պատասխանատու է թռչող օբյեկտները (ապարատները), ինչպես նաև գետնի վրայի իրադրության փոփոխությունները ժամանակին հայտնաբերելու և դրանց մասին տվյալներն անմիջապես ՀԿ (ԿԿ) հաղորդելու համար:

Մարտական հերթապահությունն ընդունելու ժամանակ դիտորդը պարտավոր է՝

— պարզորոշել ՀԿ-ի օպերատիվ հերթապահի (ԿԿ-ի հերթապահի, կրճատված մարտական անձնախմբի պետի) տված կարգադրությունները,

— ստուգել դիտարկման սարքերի, ՀԿ-ի (ԿԿ-ի) հետ կապի գծերի և պահակախմբի մյուս սարքավորումների առփնտությունը,

— հերթապահությունն ընդունելու մասին վեկուցել ՀԿ-ի օպերատիվ հերթապահին (ԿԿ-ի հերթապահին, կրճատված մարտական անձնախմբի պետին):

Հերթապահության ընթացքում դիտորդը պարտավոր է՝

— կատարել օդային իրադրության դիտարկում, տեսողաբար հայտնաբերել թռչող օբյեկտները, կողմնորոշիչների գծապատկերով որոշել դրանց ապիմուտը, տեղի անկյունը, մինչև դրանք երթած հեռավորությունը, թռչող ապարատների քանակը և տեսակը, թռիչքի կուրսը, բարձրությունը,

— կատարել դիրքի (ՀԿ-ի) շրջանում գետնի վրայի իրադրության դիտարկում,

— թռչող օբյեկտների հայտնաբերման, գետնի վրայի իրադրության փոփոխությունների մասին սահմանված ձևով անմիջապես վեկուցել ՀԿ-ի օպերատիվ հերթապահին (ԿԿ-ի հերթապահին, կրճատված մարտական անձնախմբի պետին),

— հոգատարությամբ վարվել դիտարկման սարքերի հետ:

Հերթապահ դիտորդը օդային իրադրության դիտարկում է իրականացնում օդային տարածության անընդհատ շուրջանակի դիտման միջոցով: Մի

անկտորում դիտումն իրականացվում է ՀԿ-ի օպերատիվ հերթապահի (ԿԿ-ի հերթապահի, կրճատված մարտական անձնախմբի պետի) հրամանով:

Օդային իրադրության դիտարկումը բոլոր դեպքերում կատարվում է օդային տարածությունը շերտ առ շերտ հաջորդաբար դիտելով, ընդ որում առաջին շերտը՝ աչքից հորիզոն, երկրորդը՝ հորիզոնի նկատմամբ 45° անկյան տակ, երրորդը՝ 60—80° անկյան տակ:

Թռչող օբյեկտների հայտնաբերման և գետնի վրայի իրադրության փոփոխությունների մասին տվյալների անհատակությունը կամ թերիությունը չեն կարող հիմք ծառայել դրանց վերաբերյալ տեղեկության հաղորդումն ուղայնելու համար: Դիտորդը բոլոր դեպքերում նախ երթած տեղեկությունը հաղորդում է ՀԿ (ԿԿ), ապա ճշգրտում է կասկած հարուցող տվյալները: Ըջգրտված տվյալները հաղորդվում են անհապաղ:

ՏԴՊ-ն մարտական աշխատանքի կատարման վիճակի բերելու ժամանակը չպիտի գերազանցի ստորաբաժանումը, հրամանատարական կետը հմ. 1 պատրաստության բերելու ժամանակը:

Դիտորդների մեկ հերթափոխի անընդհատ հերթապահության տևողությունը սահմանում է պորամասի հրամանատարը:

Տեսողական դիտարկման ծառայությունը կազմակերպելու և տեսողական դիտարկման պահակակետերի ապահովման համար պատասխանատվությունը դրվում է պորամասի շտաբի պետի վրա:

Դիտարկման անմիջական կազմակերպման, դիտորդների պատրաստման և պահակակետերի սարքավորման համար պատասխանատու են այն ստորաբաժանումների հրամանատարները, ՀԿ-երի պետերը, որոնց կից սարքավորված են պահակակետերը:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՀԱԿԱԿԵՏԻ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Տեսողական դիտարկման պահակակետը օժտվում է՝

- կուրսային պլանշետով,
- կապի միջոցներով,
- դիտարկման օպտիկական սարքերով,
- վայրկյանացույց-ժամացույցով,
- կողմնորոշիչների գծապատկերներով,
- թռչող ապարատների ուրվագր-ծերը, տարբերիչ նշանները և հիմնական մարտավարատեխնիկական բնութագր-ծերը պարունակող ալբոմով,
- նշանակետի անկյունային մեծությամբ հեռավորության որոշման աղյուսակներով (գրաֆիկներով),
- հերթապահ դիտորդին տրվող հրահանգով:

Կուրսային պլանշետը նախատեսված է թռչող օբյեկտների թռիչքի կուրսը և ալիմուտը որոշելու համար: Այն կապված է մինչև 40 սմ տրամագծով հորիզոնական մետաղե սկավառակից (ալիմուտային շրջանից) և սկավառակի կենտրոնում առանցքի վրա ամրացված պտըտվող կուրսային քանոնից: Ալիմուտային շրջանի արտաքին եզրին արվում են 10° հեռավորությամբ բաժանումներ: Ալիմուտային շրջանն ուղղորդվում է ըստ աշխարհի կողմերի և անշարժ ամրակայվում է եռոտանու կամ կանգնակի վրա: Կուրսային պլանշետը պիտի լուսավորում ունենա գիշերային պայմաններում աշխատանքի համար:

Կուրսային պլանշետի փոխարեն կարող են օգտագործվել անկյունաչափական հարմարանքներ ունեցող օպտիկական սարքեր:

ԱԳՊ-ի կապի միջոցները պիտի ապահովեն կապը ՀԿ-ի (ԿԿ-ի) ՋԱԿ-ի (ՓՁՀՀ-ի) կրակային դիրքի հետ: ՀԿ-ի (ԿԿ-ի) և ՏԳՊ-ի միջև հաստատվում է, որպես կանոն, բարձրախոսային կապ:

Դիտարկման օպտիկական սարքերը նախատեսված են օդային օբյեկտները հայտնաբերելու և ճանաչելու, ալիմուտը, տեղի անկյունը և մինչև դրանք եղած հեռավորությունը որոշելու, ինչպես նաև գետնի վրայի իրադրությունը դիտարկելու համար:

Վայրկյանացույց-ժամացույցը օգ-

տագործվում է դիտարկվող իրադարձությունների ժամանակը և տևողությունը որոշելու համար:

Կողմնորոշիչների գծապատկերը ծառայում է փոքր (ծայրագույն փոքր) բարձրությամբ թռչող օբյեկտի հեռավորությունն ու բարձրությունը և մինչև գետնի վրայի նշանակետերը եղած հեռավորությունները որոշելու համար:

Թռչող ապարատների ուրվագծերը պարունակող ալբոմները նախատեսված են օդային նշանակետերի տեսակը և պետական պատկանելությունը ճիշտ որարագ որոշելու համար:

Հեռավորության որոշման աղյուսակները (գրաֆիկները) կիրառվում են մինչև նշանակետը եղած հեռավորությունը այդ նշանակետի հայտնի երկրաչափական չափերի և օպտիկական սարքով չափված անկյունային մեծության հիման վրա հաշվարկելու համար:

Հերթապահ դիտորդին տրվող հրահանգը որոշում է նրա խնդիրներն ու պարտականությունները մարտական հերթապահություն կատարելիս: Այն մըշակում է ստորաբաժանման հրամանատարը ընդհանուր հրահանգի հիման վրա՝ հաշվի առնելով կոնկրետ պայմանները, և հաստատում է վորամասի հրամանատարը:

ԴԻՏՈՐԳՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Տեսողական դիտարկման պահակակետերի դիտորդները պետք է գիտենան՝

—թռչող օբյեկտների հայտնաբերման և նրանց մասին տվյալների որոշման եղանակները,

—այն ապարատների ուրվագծերը, տարբերիչ նշանները և հիմնական մարտավարատեխնիկական բնութագծերը (առավելագույն արագությունը գետնին մոտ, մարտական կիրառման նվազագույն բարձրությունը, թևերի լայնությունը, ֆյուլելաժի երկարությունը), որոնց գործողությունները հնարավոր են ՏԳՊ-ի շրջանում,

—կողմնորոշիչների գծապատկերը,
—օդային և շահակետների մասին ՏԳՊ-ից ՀԿ (ԿԿ) հաղորդվող պնկուլյների ձևը,

—դիտարկման սարքերի կիրառման կանոնները:

Նրանք պետք է կարողանան՝

—կատարել դիրքի, հրամանատարական կետի շրջանում օդային և գետնի վրայի իրադրության դիտարկում,

—հայտնաբերել թռչող օբյեկտները, որոշել նրանց ազիմուտը, տեղի անկյունը, մինչև դրանք եղած հեռավորությունը, թռչող ապարատների քանակը և տեսակը, թռիչքի կուրսը, թռիչքի բարձրությունն ըստ կողմնորոշիչների գծապատկերի,

—օգտվել դիտարկման սարքերից և կապի միջոցներից:

Գիտորդների պատրաստման և ներանց մեջ կայուն հմտությունների ձևավորման համար պետք է անցկացվեն վարժանքներ տեսողական դիտարկման կատարումից, պնկուլյներ կազմելուց և դրանք ՀԿ (ԿԿ) հաղորդելուց, դիտարկման սարքերի շահագործման կանոններին:

ԹՈՉՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՄԵՐՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎԱՆԱԿՆԵՐԸ

Հերթապահ դիտորդը հայտնաբերում և ճանաչում է ինքնաթիռներն ու շարժիչներ ունեցող ուրիշ թռչող ապարատները տեսողաբար և շարժիչների ձայնի հիման վրա:

Աերոստատները, օդապարիկները, ճախրասավառակները, դելտապլանները և շարժիչներ չունեցող մյուս թռչող ապարատները հայտնաբերվում և ճանաչվում են տեսողաբար:

Ցերեկը վատ տեսանելիության պայմաններում (մառախուղ և այլն), ինչպես նաև ամպերի հետևում թռիչքի դեպքում և գիշերը հայտնաբերումը կատարվում է ձայնի հիման վրա: Գիշերը թռչող ապարատները կարող են հայտնաբերվել տեսողաբար ըստ իրենց կողային ուղեվարական լայտերների և ցրվափարոսների:

Թռչող ապարատների հայտնաբերումը տեսողությամբ՝ կախված է օրվա պահից, օդերևութաբանական պայմաններից, օպտիկական սարքերի տեսակից, դիտորդի տեսողության սրությունից և վարժվածությունից:

Պարզ եղանակին լավ տեսանելիության պայմաններում առանձին ինքնաթիռը անվեն աչքով կարող է հայտնաբերվել, բարձրությունից կախված, մինչև 25 կմ հեռավորությունից ըստ ինվիսիտն հետքի, մինչև 18 կմ՝ ըստ ուրվագծի:

Կողային օդաուղեվարական լայտերների տեսանելիության հեռավորությունը 8—15 կմ է, իսկ իմպուլսային և ցողային լուսափարոսներինը՝ 9—18 կմ ցերեկը և 30—60 կմ գիշերը:

Ձայնի հիման վրա հայտնաբերումը կախված է թռչող ապարատների տեսակից և քանակից, նրանց թռիչքի բարձրությունից, տեղանքի բնույթից, մթնոլորտային պայմաններից, դիտորդի վարժվածությունից:

Շարժիչներ ունեցող թռչող ապարատները բարենպաստ մթնոլորտային պայմանների դեպքում ձայնի հիման վրա հայտնաբերվում են 8—12 կմ հեռավորությունից: Ձայնի հիման վրա հայտնաբերումը հարկավոր է պուզակցել օպտիկական սարքերի միջոցով տեսողական դիտարկման հետ:

Թռչող ապարատի ապիմուտը որոշվում է կուրսային պլանշետով (օպտիկական սարքի անկյունաչափական հարմարանքով): Դրա համար դիտորդը կուրսային քանոնը (դիտարկողը) ուղղում է դեպի հայտնաբերված ապարատը և պլանշետի սանդղակի վրա (օպտիկական սարքի հորիզոնական անկյունների սանդղակի վրա) կարդում ապիմուտի արժեքը:

Նշանակետի տեղի անկյունը որոշվում է օպտիկական սարքի ուղղաձիգ անկյունների սանդղակով՝ ապիմուտի չափման նման:

Այն դեպքում, երբ օպտիկական սարքերը անկյունաչափական հարմարանք չունեն, դիտորդը նշանակետի տեղի անկյունը որոշում է մոտավորու-

թյամբ: Ցածր թռչող նշանակետերի տեղի անկյունը որոշելու համար օգտագործում են օպտիկական սարքի դիտանկյան հայտնի արժեքը: Հեռադիտակի դնալքում այն հավասար է 6—8°-ի:

Հեռավորությունը (հեռավորությունը թեքությանը) որոշվում է օպտիկական սարքերի միջոցով, տեղանքի կողմնորոշիչներով, թռչող ապարատների և նրանց կառուցվածքային տարրերի տարբերակելիության հիման վրա:

Լազերային սարքերը թույլ են տալիս հեռավորությունը չափել արագ և մեծ ճշգրտությամբ:

Մյուս օպտիկական սարքերը (հեռադիտակներ, դիտափողեր) հնարավորություն են տալիս հեռավորությունը որոշելու ըստ ապարատի թևերի հայտնի չափերի (ֆյուլերաժի հայտնի երկարության) և դրանց չափված անկյունային մեծությամբ: Դրա համար օգտագործվում է հետևյալ կախումը՝

$$\angle = \frac{L}{U},$$

որտեղ \angle -ն մինչև նշանակետը եղած հեռավորությունն է՝ կմ,

L-ն՝ թևերի լայնությունը կամ ֆյուլերաժի երկարությունը՝ մ,

U-ն՝ դիտորդից դեպի թևերի կամ ֆյուլերաժի ծայրակետերը տանող ուղղություններով կապված անկյունը՝ հեռադիտակի (դիտափողի) անկյունաչափիչ ցանցի բաժանումներով:

Պետք է նկատի ունենալ, որ օպտիկական սարքերի անկյունաչափիչ ցանցի մեկ մեծ բաժանումը հավասար է անկյունաչափի 10 բաժանման, այսինքն՝ համապատասխանում է հեռավորության 10:1000-ին, իսկ մեկ փոքրը հավասար է անկյունաչափի 5 բաժանման կամ համապատասխանում է հեռավորության 5:1000-ին:

Հաշվարկների պարզեցման համար թռչող ապարատների գծային չափերը վերցվում են միջին արժեքներով, այն է՝ ուժբալոնի թևերի լայնությունը համարվում է հավասար 40 մ-ի, կործանիչինը՝ 10 մ-ի, թևավոր հրթիռինը՝ 4 մ-ի, ռըմ-

բալոնիչի ֆյուլերաժի երկարությունը համարվում է հավասար 40 մ-ի, կործանիչինը՝ 18 մ-ի, թևավոր հրթիռինը՝ 6 մ-ի, ուղղաթիռինը՝ 10 մ-ի:


Այդ տվյալների հիման վրա կապվում են հեռավորության որոշման աղյուսակները և գրաֆիկները: Գրաֆիկում ուղղաձիգ առանցքի վրա նշվում են նշանակետի անկյունային չափերը, իսկ հորիզոնական առանցքի վրա՝ մինչև նշանակետը եղած հեռավորությունը (նկ. 1):

Դիտորդը մինչև նշանակետը եղած հեռավորությունը հեռադիտակով (դիտափողով) որոշում է հետևյալ հաջորդականությամբ. որոշում է ապարատի տեսակը, սարքի (հեռադիտակի, դիտափողի) անկյունաչափիչ ցանցի բաժանումները համատեղում է դիտարկվող նշանակետի ուրվագծի հետ և որոշում այն բաժանումների քանակը, որոնց մեջ տեղավորվում է թևերի լայնությունը կամ ֆյուլերաժի երկարությունը, ապա որոշում է մինչև նշանակետը եղած հեռավորությունը ըստ աղյուսակի (գրաֆիկի):

Բերենք մի օրինակ: Ինքնաթիռի ֆյուլերաժը տեղավորվել է ցանցի մեկ փոքր բաժանման մեջ, որ հավասար է անկյունաչափի 5 բաժանումների: Ինքնաթիռը կործանիչ է, նրա ֆյուլերաժի երկարությունը 18 մ է: Հեռավորության աղյուսակով (գրաֆիկով) որոշում ենք, որ մինչև ինքնաթիռը եղած հեռավորությունը 3,6 կմ է:

Փոքր բարձրությամբ թռչչի դեպքում, երբ կարելի է որոշել, թե օդային նշանակետը տեղանքի ո՞ր կետի վերևում է գտնվում, մինչև նշանակետը եղած հեռավորությունը որոշվում է տեղանքի կողմնորոշիչների միջոցով:

Դրա համար տեղանքում ընտրում են 10—12 կողմնորոշիչ, չափում են մինչև դրանք եղած հեռավորությունները, դրանց բարձրությունը ռելիեֆից և կապմում են կողմնորոշիչների գծապատկեր: Նշանակետ հայտնաբերելու դեպքում դիտորդը որոշում է, թե տեղանքի ո՞ր կետի վերևում է այն գտնվում, և, համեմատելով մինչև այդ կետը եղած հեռավորությունը մինչև նրան մոտ կողմնորո-



Կորերը հաշվարկված են L-ի հետևյալ արժեքների համար.
 1՝ 40 մ, 2՝ 18 մ, 3՝ 10 մ, 4՝ 6 մ, 5՝ 4 մ:

Նկ. 1 Հեռավորության արժեքի աղյուսակը և գրաֆիկը

շիչը եղած հայտնի հեռավորության հետ, որոշում է մինչև նշանակետը եղած հեռավորությունը: Այս եղանակն օգտագործվում է նաև մինչև գետնի վրայի նըշանակետը եղած հեռավորությունը որոշելու համար:

Թռչող ապարատների և նրանց մասերի տարբերակելիության հիման վրա հեռավորության որոշումը առավել նվազ ճշգրտություն ունեցող արդյունքներ է տալիս: Օդային նշանակետերը 8—10 կմ հեռավորությունից անվեն աչքով երեվում են որպես կետեր, նրանց առանձին մասերը չեն տարբերակվում: 3—4 կմ հեռավորությունից տարբերակվում են թեվերի և ֆյուլեիլաժի ուրվագծերը, շարժիչները: 1—2 կմ և պակաս հեռավորությունից տարբերակվում են մանր մասերը (պոչային փետրավորանքը, կախովի բաքերը) և տարբերիչ նշանները:

Թռչող սարքերի քանակը տեսողական դիտարկման դեպքում որոշվում է նրանց սովորական հաշվումով: Այն դեպքերում, երբ նրանք տեսողությամբ չեն դիտարկվում, նրանց քանակը որոշվում է լսողությամբ՝ շարժիչների աղմուկի հիման վրա՝ հաշվի առնելով, որ առանձին ապարատի աղմուկը լսվում է որպես մեկ կետից եկող, իսկ խմբի աղմուկը՝ հզոր և անհավասար, լսվում է որպես տարածության մի քանի մտտիկ կետերից եկող:

Թռչող ապարատների տեսակի (ռմբակոծիչ, կործանիչ, ուղղաթիռ, թևավոր հրթիռ, ճախրասավառակ, օդապարիկ) որոշումը (ճանաչումը) կատարվում է տեսողությամբ՝ դրանց ուրվագծերի, կառուցվածքային առանձնահատկությունների հիման վրա, ինչպես նաև ըստ ձայնի: Ըստ որում դիտորդը հատուկ ուշադրություն է դարձնում թևի ձևին և ֆյուլեիլաժի նկատմամբ նրա դիրքին, պոչային փետրավորանքին և ֆյուլեիլաժի նկատմամբ նրա դիրքին, շարժիչների օղակլանիչների ուրվագծին, շարժիչների քանակին և դասավորությանը:

Թռչող ապարատների տեսակի որոշումն ըստ շարժիչների աղմուկի կատարվում է թռչիչի ժամանակ արձակվող

ձայների տոնի և ձայներանգի հիման վրա:

Ռմբակոծիչների մեծ մասի համար բնորոշ են ցածր, հավասար, խոր տոները: Կործանիչներն արձակում են մեծ ուժգնություն ունեցող կտրուկ ձայն: Թևավոր հրթիռները և մյուս անօդաչու անրոդինամիկական միջոցները, երբ մոտենում են դիտորդին, արձակում են ցածր տոնով թրթռալուց գվվոց, որ դիտարկման պահակետին անցնելուց հետո վերածվում է թանձրահունչ շոփնդի:

Թռիչքի կուրսը որոշվում է կուրսային պլանշետի կամ օպտիկական սարքի անկյունաչափական հարմարանքի միջոցով: Դրա համար դիտորդը պլանշետի կուրսային քանոնը (սարքի դիտափողը) ուղղում է նշանակետի թռիչքի գծին (ձայնի տեղաշարժման գծին) վուգահեռ, ցույցիչը՝ նրա շարժման ուղղությամբ, և, պլանշետի սանդղակի վրա (սարքի հորիզոնական անկյունների սանդղակի վրա) կարդալով համապատասխան տվյալները, որոշում է կուրսը:

Գիշերը նշանակետի թռիչքի կուրսը կարող է որոշվել ըստ կողային օդաուղեվարական լապտերների:

Նշանակետի թռիչքի բարձրությունը որոշում է ՀԿ-ի օպերատիվ հերթապահը (ԿԿ-ի հերթապահը) դիտորդի չափած հեռավորության և տեղի անկյան արժեքների հիման վրա: Դրա համար օգտագործվում է բարձրության որոշման աղյուսակը, որում հաշվարկներն արված են հետևյալ բանաձևով.

$$H = \angle \sin \theta \cdot 10,$$

որտեղ Հ-ն մինչև օդային նշանակետը եղած հեռավորությունն է՝ կմ,


θ-ն՝ նշանակետի տեղի անկյունը՝ աստիճան,

Н-ը՝ նշանակետի բարձրությունը՝ հմ:

Աղյուսակը հաշվարկված է մինչև 20 կմ հեռավորությունների և 5°-ի բավապատիկ տեղի անկյունների համար: Այն պահվում է ՀԿ-ի օպերատիվ հերթապահի (ԿԿ-ի հերթապահի) աշխատատեղում: Աղյուսակի փոխարեն կա-

Նշանակեալի տեղի անկյունը	Հեռավորությունը մինչև նշանակեալ (կմ)						
	1	2	3	4	5	6	7
Նշանակեալի բարձրությունը (մ)							
5°	100	150	250	300	400	500	600
10°	150	300	500	700	800	1000	1200
15°	250	500	800	1000	1300	1600	2000
20°	350	700	1000	1400	1700	2000	2400
25°	400	800	1300	1700	2000	2500	3000
30°	500	1000	1500	2000	2500	3000	3500

Բարձրությունը (կմ)



Նկ. 2 Բարձրության որոշման աղյուսակը և գրաֆիկը

րող է օգտագործվել գրաֆիկը (սկ. 2):

Ռելիեֆի վրայով փոքր և ծայրագույն փոքր բարձրությունների թռչող նշանակետների թռիչքի բարձրությունը որոշում է ՏԴՊ-ի դիտորդը՝ օգտագործելով կողմնորոշիչների գծապատկերը: Օդային նշանակետի թռիչքի բարձրոթ-

յան չափումը կատարվում է կողմնորոշիչների բարձրությունների հետ այն համեմատելու միջոցով:

Դիտարկման ժամանակը որոշում է ՀԿ-ի օպերատիվ հերթապահը (ԿԿ-ի հերթապահը) հերթապահ դիտորդիս զնկույց ստանալու պահին:

В ВОЙСКАХ ПВО

ОРГАНИЗАЦИЯ БОЕВОГО ДЕЖУРСТВА НА ПОСТАХ ВИЗУАЛЬНОГО НАБЛЮДЕНИЯ ВОЙСК ПВО

Р. В. МАРГАРЯН, полковник

РЕЗЮМЕ

С первых дней своего существования Республика Армения твердо придерживается принципов и норм мирного сосуществования, провозглашенных ООН. Исходя из этого, Армения активно участвует во всех миротворческих процессах в мире и, в частности, в регионе, примыкает к различным системам обеспечения международной безопасности. Однако в условиях сложной геополитической обстановки в регионе, с учетом агрессивных устремлений Аз. Р, для обеспечения национальной безопасности Республики Армения от ее ВС требуются повышенная бдительность и постоянное пребывание в состоянии высокой боеготовности. Хотя это относится ко всем родам войск, входящим в состав ВС РА, однако особые требования предъявляются к войскам ПВО. Войска ПВО обязаны своевременно оповещать свои войска и население о наиболее мобильных средствах агрессии — средствах воздушного нападения противника. Следовательно, знание основных требований к организации и несению боевого дежурства в войсках ПВО, по нашему мнению, будет полезно для всех военнослужащих ВС РА.

Данная статья освещает основные требования к организации визуального наблюдения за воздушной и наземной обстановкой, осуществляемого на постах визуального наблюдения.

Боевое дежурство на постах визуального наблюдения (ПВН) является выполнением боевой задачи. Оно осуществляется с целью непрерывного наблюдения за воздушной и наземной обстановкой и своевременной передачи данных на КП (ПУ). ПВН являются дополнительными источниками информации о воздушной обстановке.

Расположение ПВН должно обеспечивать обзор воздушного пространства во всех направлениях и, по возможности, быть удаленным от источников посторонних шумов. Для несения боевого дежурства на ПВН назначаются дежурные наблюдатели, входящие в состав боевого (сокращенного боевого) расчета подразделения, командного пункта.

